



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

10 սեպտեմբերի 2019 թվական

Յ-ՐԴ ՆՏՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 14.20

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են
ավագանու 16 անդամ՝

Գայանե Եղիազարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հռիփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Դավիթ Խաժակյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Հայկ Հովհաննիսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Լիլիթ Կիրակոսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Արսեն Կարապետյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Գրիգորի Երիցյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հայկ Միրզոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լիլիթ Պիպոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Եղիազարյան, խնդրեմ:

Գայանե Եղիազարյան

-Պարոն քաղաքապետ, վերջերս հանդիպում էիք ունեցել Երևանի տրանսպորտային ցանցն օգտագործող տնտեսվարողների, այսինքն՝ մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ և առաջարկներ էիք արել, այդ թվում նաև առաջարկել էիք, որ ցանկության դեպքում կարող են ներկրել մեր ապագա տրանսպորտային ցանցին համապատասխանող տրանսպորտային շարժակազմ:

Հարցս հետևյալն է, ինչպե՞ս են ընդունել մասնավոր ընկերությունները, արդյոք տրանսպորտային միջոցները ներկրելու մասով արձագանք եղե՞լ է:

Երկրորդ հարցս. մինչև տրանսպորտային նոր ցանցի գործարկումը, երևանցիները միջանկյալ ի՞նչ փոփոխություններ կարող են տեսնել:

Հայկ Մարություն

-Շնորհակալություն հարցի համար: Նախ շատ ողջունվեց տնտեսվարողների կողմից այս հանդիպումը: Ճիշտն ասած, հարց տվեցի, թե իրենց հետ երբևիցե այսպիսի հանդիպում կազմակերպված եղե՞լ է, թե՛ ոչ, պատասխանը բացասական էր: Ինձ համար շատ կարևոր էր, որ այդ հանդիպումը տեղի ունենա, մարդիկ հենց իմ կողմից լսեին ընթացքի մասին, ի՞նչ է լինելու, ինչպե՞ս կարող են իրենք ինտեգրվել այս գործընթացում: Այո, այդ ժամանակ նաև խոսեցինք ապագա ցանցում իրենց մասնակցության մասին: Ասացի, որ այս պահին քաղաքապետարանը կարծում է, որ ապագա ցանցը պետք է լինի համայնքի տիրապետության տակ, որպեսզի մեծ մասը լինի համայնքին և, բնականաբար, մասնավորը պետք է մասնակցություն ունենա:

Առայժմ քննարկում ենք **70 30** հարաբերակցությունը, չնայած՝ այս թվերը կարող են փոխվել, իրենք այն **30%**-ի մեջ կարող են մասնակից լինել, եթե համապատասխանեն այն բոլոր տեխնիկական պահանջներին, որոնք պետք են մեր ցանցին: Սա առաջարկ արվեց իրենց և ասվեց, որ բոլոր տեխնիկական պարամետրերը, այն տնտեսվարող սուբյեկտները, ովքեր կուզեն, կտրամադրենք իրենց: Ժամանակ տրվեց մտածելու համար, որպեսզի հասկանան, ուզու՞մ են մասնակից լինել այդ ամենին, թե՛ ոչ: Սա առաջին հարցն էր, որ քննարկվեց, բնականաբար ժամանակ տրվեց, որպեսզի իրենք պատրաստվեն, նամակներով դիմեն մեզ, մենք էլ տրամադրենք տվյալ տեղկությունները:

Ինչ վերաբերում է մինչև վերջնական ցանցի գործածումը, կարող եմ ասել, որ ժամանակավոր լուծումներ, այնուամենայնիվ, պետք է տրվեն, բազմիցս նշել եմ, ևս մեկ անգամ կասեմ, որ մյուս տարի, մոտավորապես **400** երթուղային տաքսի արդեն կնշեի իր **15**-ամյակը, որն օրենքի ուժով Երևան քաղաքում գործածվելու իրավունք չունի: Սա խնդիր է առաջացնելու, որովհետև երթուղային տաքսիների գրեթե կեսն օրենքի ուժով դուրս է մնալու ցանցից, և այդ բացը լրացնելու համար Երևանի քաղաքապետարանը պետք է նոր շարժակազմ ձեռք բերի:

Տնտեսվարողներին նաև առաջարկվեց ձեռք բերել այս շարժակազմը, առաջարկվեց, որ առաջնահերթությունը կտրվի իրենց: Չկարողանալու, չցանկանալու կամ այլ պատճառով այդ գործողությունը չանելու դեպքում, մենք պետք է համալրենք, առայժմ, որպեսզի ցանցն այն վիճակում, որ կա, գործում է, մի փոքր ավելի լավ լինի, մինչև երկու տարվա գործընթացն անցնի, և կունենանք վերջնականապես նորացված ցանց: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հոփսիմե Առաքելյան:

Հոփսիմե Առաքելյան

-Առաջին հարցս վերաբերում է Սանիթեք ընկերության իրավական գործընթացներին: Իհարկե, երեկ փոխքաղաքապետ Սարգսյանն ինձ հավաստեց, որ Երևանն իր իրավական պաշտպանվածության առումով ռիսկեր չունի կապված Սանիթեքի հետ: Ես կցանկանայի մի փոքր մանրամասնելիք, արդյոք մենք պաշտպանված ենք, եթե Սանիթեքը հետագայում դատական գործընթացներ սկսի, չնայած՝ Դուք **100%**-ով վստահեցնում եք, որ հիմքեր չունի այս մասով: Եթե կլինի այդպիսի դեպք, ապա որքանո՞վ ենք մենք հիմնավոր փաստարկված և ճիշտ, որ այդ պատմության մեջ մենք շահող կլինենք: Շնորհակալություն:

Երկրորդ հարցս վերաբերում է կարմիր գծերին: Այս հարցի մասին, ճիշտն ասած, ամիսներ առաջ կրկին բարձրաձայնել եմ և անգամ Երևանի քաղաքապետարանի կողմից եթեր հեռարձակվող հաղորդման ընթացքում էլ կրկին նշել եմ: Ես այլևս չգիտեմ այս հարցն ինչպես կարող ենք լուծել: Պարոն քաղաքապետ, միգուցե Դուք հիմա նորից կհակադարձեք՝ ասելով, որ սա ոստիկանության գործառույթն է, ճանապարհային ոստիկանության խնդիրն է, բայց, քանի որ, կարմիր գծերն այսօր մեզ են պատկանում և շահագործվում են անհասկանալի մարդկանց կողմից ռեկետի միջոցով, մենք ի՞նչ մեխանիզմներ ունենք, առհասարակ, նույն ոստիկանությանը դիմելու, հասկանալու և նաև պաշտպանելու մեր քաղաքացուն քաղաքի կենտրոնում այս համատարած խուլիգանական սկզբունքներով իրականացվող ռեկետի դեմ:

Քանի որ Հյուսիսային պողոտայում վերջերս իմ ընկերների, այդտեղ բնակվող շատ բնակիչների, Երևան այցելած զբոսաշրջիկների կողմից ահագանգերն ահագնացող թվերի են հասնում, որ անգամ **1500-2000** դրամի չափով մասնավոր անձինք այդտեղ ուղղակի աշխատում են և ռեկետ են անում: Այսպիսի իրողություն է և մի զարմացեք, պարոն քաղաքապետ, միգուցե Ձեզնից չեն վերցնում, բայց հասարակ քաղաքացիներից վերցնում են: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շատ շնորհակալություն, տիկին Առաքելյան: Ես առաջին հարցին պատասխանեմ: Ինչքանով ենք պաշտպանված, եթե Սանիթեք ընկերության հետ լինի դատական պրոցես: Դուք նշեցիք, որ ասում ենք չենք կարող դիմել կամ մյուսը, այդպիսի բան ոչ ոք չի ասել, այլ ասել ենք, որ պաշտպանված ենք, ինչն էլ նշանակում է, որ իրավական մասով մեր գործողություններն այնպիսին են, որ ոչ մի խնդիր չունենանք: Ամեն ստորակետը, ամեն կետը, ամեն մեծատառ և փոքրատառը, նամակագրությունը բազմիցս ստուգվում է, քննարկվում է, նոր արվում է: Այսինքն՝ փաստաթղթերի մասով մաքսիմալ զգույշ ենք, մաքսիմալ ուշադիր ենք և ամեն ինչը դիտարկում ենք այն լույսի ներքո, որ լինելու է դատական պրոցես: Իսկ կգնան դատարան, թե՛ ոչ, դա իրենք են որոշելու և, ի վերջո, դատական գործընթացի համար երաշխավորել չենք կարող, բայց կարող ենք երաշխավորել, որ մեր կողմից ամեն ինչ արվում է մաքսիմալ, շատ ուշադիր: Բացի դրանից, եթե օբյեկտիվորեն նայենք հասարակ քաղաքացու աչքերով պարզ է ով է մեղավոր, ով՝ անմեղ, ով է տապալում աղբահանությունը, ով է փորձում այս ամենն ուղղակի ճգնաժամային կառավարմամբ իմի բերել:

Կարմիր գծերի հետ կապված նշեմ, որ այստեղ այդքան կարմիր գծերը կապ չունեն, ասում եք, որ ինչ-որ մարդիկ կարմիր գծերի կամ ինչ-որ տեղ կայանման համար գումար են վերցնում, ուզում են ասել ինձ համար ոչ մի տարբերություն չկա դա կարմիր գծերի վրա է, թե այլ տեղ: Ուղղակի ամեն քաղաքացի պետք է իմանա, որ այդպիսի գործունեություն չի կարող տեղի ունենալ և այդ գումարը չտա: Եթե այդ գումարը չտալու համար իրենց սպառնան, բնականաբար, պետք է դիմեն ոստիկանություն: Շատ հաճախ, որպեսզի մեր կոլեգաներին անընդհատ հղումներ չանեն, որ չասեն քաղաքապետն անընդհատ ոստիկանությանն է մեջ բերում ինչ-որ բաներ չանելու համար, շատ հաճախ չեմ ասում դա, բայց, այնուամենայնիվ, այսօր քաղաքային իշխանությունը շատ լուրջ խնդիրներ ունի ոստիկանության աշխատանքի պատճառով:

Ես ներողություն եմ խնդրում մեր գործընկերներից, բայց պետք է շեշտեմ, որ երկրորդ շարք կանգնելը, չնախատեսված վայրերում կամ մայթերին կայանելը և առհասարակ

կայանատեղերի և երթևեկության հետ կապված այնքան խնդիրներ կան, որ ոստիկանությունը պետք է վերացնի, չի անում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում մեզ համար: Մենք հավաքվում ենք այստեղ, ավագանին նախագծեր է ներկայացնում, որոշումներ է կայացնում, որից հետո այդ որոշումները պետք է ի կատար ածվեն: Այդ որոշումներն ի կատար ածելը մոտավորապես **80-90%**-ով կախված է ոստիկանությունից, իրենք պետք է մեր որոշումներն իրագործեն և խախտողներին պատժեն:

Եզրափակելով ելույթս՝ ասեմ, որ մեր կողմից իրենց ուշադրությունն անընդհատ գրավում ենք: Գիտեք ամեն երկուշաբթի քաղաքապետարանում անցկացվում է գործակարգավարական խորհրդակցություն, որի ընթացքում պարբերաբար անդրադառնում եմ այս կամ այն խնդրին, որը կապված է թե՛ ոստիկանության, թե՛ ճանապարհային ոստիկանության հետ: Համենայնդեպս՝ սրանից ավելի բան չեմ կարող ասել, իմ լիազորության սահմաններից դուրս չեմ կարող գալ: Շնորհակալություն:

Հոփսիմե Առաքելյան

-Պարոն քաղաքապետ, կարմիր գծերը մենք ենք համակարգում և կարմիր գծերի համար երևանցին տարեկան վճարում է **12 000** դրամ և այդ կարմիր գծերն այսօր վերավաճառվում են ռեկետ անող ինչ-որ անձանց կողմից: Դուք ասում եք ես ի՞նչ անեմ, եկեք մտածենք ինչ մեխանիզմով դիմենք ոստիկանությանը: Այս հարցը բարձրացնենք, որովհետև այն բոլորին է վերաբերում և, եթե դուրս գաք փողոց և նույն այդ կայանատեղերում կանգնած ապօրինի վճարումներ անող քաղաքացիներին հարցնեք, կիմանաք, որ մարդկանց ուղղակի տեղ չեն տալիս կարմիր գծերի վրա կայանել, ասում են՝ փողը կտաս, կկանգնես: Դուք զարմանում եք, չգիտեք, որ այսօր այդպես է: Մենք ի՞նչ կարող ենք անել, ինչ-որ մեխանիզմ մշակենք, դիմել, սաստել կամ ասել ավելի ուշադիր լինեն, միայն ասել, որ դա մեր գործառույթների մեջ չի մտնում, բայց այդ կարմիր գծերը մենք ենք շահագործում, մարդիկ այդ գումարը վճարում են քաղաքային բյուջե և որևէ կերպ չեն կարողանում կայանել:

Սանիթեքի պահով, բնականաբար, որևէ մեկը չի կարող կանխատեսել, թե դատարաններն ինչպիսի վճիռ կկայացնեն, խոսքը վերաբերում էր, թե մենք որքանով ենք հիմնավոր փաստարկված, խոսքը սրա մասին է, իսկ նշանակել, դե մենք գիտենք սա մեղավոր է, սա անմեղ է, մի քիչ անշնորհակալ գործ է: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ, ես զարմանում եմ, ոչ թե նրա համար, որ Ձեր ասածը տեղի է ունենում, այլ զարմանում եմ, որ նորից դա ասում եք և ընդհանրապես սա հնչում է այստեղ, որովհետև, կրկնում եմ, սա մեր լիազորությունների սահմանում չէ: Դուք ասում եք ասեք, դիմեք, ասել ենք, բանավոր դիմել ենք, գրավոր դիմել ենք, հորդորել ենք, խնդրել ենք, ամեն

ինչ արել ենք, էլ գործողություն չկա, որ անենք: Զարմանում եմ, որ նորից բարձրացնում եք այդ հարցը, տիկին Առաքելյան, մենք չենք կարող դառնալ ոստիկանություն, որքան էլ ուզենք քաղաքապետարանը չի կարող դառնալ ոստիկանություն, քաղաքապետն էլ՝ ոստիկանապետ: Ուրիշ տարբերակ չունենք, անընդհատ պետք է ասենք, հորդորենք, խնդրենք, որ ուշադրություն դարձնեն, դա անում ենք, բայց, այնուամենայնիվ, արդյունքը տեսնում եք: Ես հեծանիվով եմ գալիս աշխատանքի կամ ոտքով, շատ լավ տիրապետում եմ խնդրին, էլ չեմ ասում, որ ամեն շաբաթ, կիրակի ամբողջ քաղաքով շրջում եմ, գիտեմ այդ մասին: Ինչու եմ շաբաթ, կիրակի շրջում, նախ, որ ազատ եմ աշխատանքից, երկրորդը՝ երկուշաբթի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ թարմ տպավորություններով և կոնկրետ փաստերով սկսում եմ, այսպես ասած, չակերտավոր հարձակումը ոստիկանության մեր ընկերների վրա, սակայն տեսնում ենք արդյունքն ինչպիսին է:

Ես Ձեզ հետ համաձայն եմ, որ դա անթույլատրելի է, չմտածեք, որ սա ասում եմ, ուրեմն համաձայն չեմ, այո, անթույլատրելի է: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրեմ:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն: Պարոն քաղաքապետ, երկու հարց ունեմ, որոնք առանձին-առանձին կտամ: Առաջին հարցս վերաբերում է ուղիղ մեկ տարի առաջ արված հայտարարություններին, մասնավորապես, նախընտրական շրջանում Ձեր այն հայտարարությանը, որտեղ ասում եք, որ «նախատեսվում է Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի Գործարանային կայարանում շարժն ակտիվացնելու նպատակով հարակից տարածքում աշխուժացնել քաղաքային կյանքը» մեջբերման ավարտ: Հարցս հետևյալն է. իրականացվո՞ւմ կամ նախատեսվո՞ւմ է որևէ քայլ ձեռնարկել այս ուղղությամբ և կարող ենք արդյոք ասել, որ մետրոպոլիտենի Գործարանային կայարանի շրջակայքում վերջերս ակտիվացած քաղաքային կյանքն այդ պլանի մի մասն է:

Հայ Մարության

-Այո, ասեմ ավելին, նախ այնտեղ ինչ հողամասեր կան գույքագրել ենք և իրենց հետ այդ հողամասերի ապագայի վերաբերյալ բանակցում ենք, բացի դրանից և՛ մենք, և՛ սպորտի նախարարությունն այդտեղ ունենք մեծ հողակտորներ և որոշում է կայացվել, որ բացվելու է մարզային մեծ համալիր, որը հենց Գործարանային կայարանի դեմ դիմաց է գտնվում, բավականին մեծ հողատարածք է, այս պահին պատրաստվում է նախագիծ, որպեսզի սկսենք այս գործընթացը:

Դավիթ Խաժակյան

-Անցնեմ երկրորդ հարցիս: **2019թ.** զարգացման ծրագրում արձանագրել էինք հետևյալը, որ նախատեսվում է մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն (**City Development Strategy**) որն ուղղված կլինի ենթակառուցվածքների զարգացմանը, բնակության բոլոր շերտերի կարիքների և կենսական պահանջների բավարարմանը և այլն: Ուզում էի տեղեկանալ՝ քանի որ սա **2019թ.** ծրագիրն էր, հասցնում ենք արդյոք մինչև տարեվերջ քաղաքի ռազմավարական զարգացման պլանի մշակումը, թե՛ ոչ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը:

Հայկ Մարգարյան

-Քաղաքների համաշափ զարգացման միջազգային ծրագրի շուրջ մեր քաղաքի **10-**ամյա ռազմավարական ծրագրի նախատիպը պատրաստ է, ընդ որում այս ծրագրի շրջանակում քաղաքապետի որոշմամբ ձևավորվել են աշխատանքային խմբեր քաղաքի տնտեսական զարգացման խորհուրդ, որի ներքո գործելու են, եթե չեն սխալվում թվով **7** տարբեր պրոֆիլային աշխատանքային խմբեր: Խմբերի կազմն արդեն հավաքագրված և հաստատված է և այս խմբերը լծվելու են, չակերտավոր ասված, այս ծրագրի նախատիպի բազայի վրա քաղաքի **10-**ամյա զարգացման ծրագրի մշակմանը: Դրա ժամկետները, եթե չեն սխալվում, մինչև հաջորդ տարվա ապրիլ-մայիս ամիսներն են, այնպես որ կարծում եմ հասցնելու ենք:

Դավիթ Խաժակյան

-Խոսքը վերաբերում էր քաղաքաշինություն և ճարտարապետություն բլոկում նախատեսված **2019թ.** աշխատանքներին:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Հովհաննիսյան, խնդրեմ:

Հայկ Հովհաննիսյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, նախորդ նստաշրջանի եզրափակիչ նիստում օրակարգից հանեցիք «Երևան համայնքի կամավոր խնդիրները և սոցիալական աջակցության չափորոշիչները սահմանելու, կամավոր խնդիրների լուծման նպատակով Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու» մասին նախագիծը: Այն ժամանակ արդարադատության նախարարության կողմից մի քանի դիտարկումներ են եղել, ենթադրաբար բացասական եզրակացություն, այդ պատճառով

հարցը դուրս եկավ օրակարգից և հարցս հետևյալն է. արդյոք աշխատանքներ են տարվել այդ ուղղությամբ, որպեսզի կարողանանք այդ նախագիծն ունենալ և արդյոք այս տարի կունենանք օրակարգում:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայա Մարգարյանը:

Հրայա Մարգարյան

-Շնորհակալություն հարցի համար, կցանկանայի տեղեկացնել, որ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության որոշ անդամներ արդեն հանդիպել են աշխատանքային այն խմբի հետ, որը այս պահի դրությամբ իրականացնում է Երևան քաղաքում սոցիալական խնդիրների գույքագրումը ինչպես իրավական հարթության մեջ, այնպես էլ բյուջեով, որից հետո մենք կկարողանանք վերջնական ընդհանուր պատկերը ներկայացնել թե Երևան համայնքը սոցիալական ոլորտում կամավոր խնդիրներն ինչ ուղղվածությամբ է իրականացնելու: Նաև որոշում է կայացվել, որպեսզի վարչական շրջաններին տրվեն համապատասխան սահմանաչափեր, որ կարողանան տեղում որոշակի խնդիրներ լուծել, մինչև լինի ամբողջական հաշվետվությունը, որի վերջնաժամկետը նոյեմբերի վերջին է:

Հայկ Հովհաննիսյան

-Փաստացի նոյեմբերի վերջին կունենանք տվյալ աշխատանքային խմբի եզրակացությունը:

Հրայա Մարգարյան

-Այո, ամբողջությամբ կունենանք:

Հայկ Մարության

- Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Միքայել Մանրիկյան, խնդրե՛մ:

Միքայել Մանրիկյան

-Մոտ մեկ ամիս առաջ բարձրացրինք Նորք-Մարաշ բժշկական կենտրոնի հետ կապված խնդիրն այն մասին, որ կատարված աշխատանքի հարյուր յոթանասուն միլիոն դրամը դեռ չէր փոխանցվել քաղաքային բյուջե: Խնդրում եմ պարզաբանել գործն ի՞նչ փուլում է, կա արդյոք առաջընթաց:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Մանրիկյան: Եթե հիշում եք, ես նշեցի, որ խնդրի լուծումը քաղաքապետարանի տիրույթից փոխանցված է առողջապահության նախարարության տիրույթ և նախարարության կողմից դեռևս դրական արձագանք և զարգացումներ չունենք:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալություն: Երկրորդ հարցս ուղղված է գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանին: Երբ Դուք ստանձնեցիք Երևանի գլխավոր ճարտարապետի պաշտոնը, ասացիք, որ երևանցիներին վերադարձնելու եք թամանյանական Երևանի ճարտարապետությունը: Այսօր, իմ և մեր քաղաքացիների գնահատմամբ, այդ խոսքերը մնացին լոկ խոսքեր: Ոչ մի գործնական քայլ չի եղել և դրա վառ ապացույցն է, այսօր քաղաքում բազում շինությունների վեր խոյանալն այնպիսի փոքր բակային տարածքներում, որոնք թույլատրելի չեն և այլն:

Դուք շատ լավ հիշում եք Եկմայան փողոցի շինության հետ կապված խնդիրը, որը նաև որոշակի սոցիալական խնդիրներ էր լուծում: Պարոն քաղաքապետ, Դուք նույնպես ասացիք, որ այդտեղ չի կարելի շենք կառուցել, քանի որ այդ հատվածում շենքերի դասավորվածությունը տեսրիսանման է լինելու: Սակայն, այդ նույն օրինակով այսօր տարբեր վարչական շրջաններում կան վեր բարձրացող շենքեր, որոնք գրեթե նույն արտացոլանքն ունեն, ինչպես Եկմայան փողոցի շինությունը:

Ցանկանում եմ հասկանալ Ձեր մոտեցումը: Արդյոք այցելում եք տվյալ վայրեր, թե միայն նախագծով եք հաստատում այդ ամենը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանը:

Արթուր Մեսչյան

-Ավագանու հարգելի անդամներ, ես փորձում եմ հնարավորինս կատարել իմ խոստումները: Այն ճարտարապետական զարգացումները, որ այսօր կատարվում են քաղաքում, ոչ այսօր է սկսվել, ոչ՝ երեկ: Կենտրոն վարչական շրջանում՝ առանձնապես թաղամասերում, կառուցապատումները շարունակվում են, խոսքը վերաբերում է կետային կառույցներին, որը պրոֆեսիոնալ ժառանգություն է հասել մեզ և ինչ-որ եղանակով պետք է լուծում տալ:

Ինչ վերաբերում է Եկմայան փողոցին՝ այն արդեն բավականին խիտ կառուցապատված է: Սակայն կա երկրորդ խնդիրը՝ այնտեղ կան բնակիչներ, որոնց տները ժամանակին քանդվեցին, մի մասը վարձատրվեցին, մյուս մասը՝ ոչ, և շատ մարդիկ մնացել

են դրսում: Այնտեղ կա հողատարածք, որտեղ մի ինչ-որ շինություն կառուցելու դեպքում հնարավոր կլինի այդ բնակիչներին բնակեցնել: Այս հարցի վերջնական դրական պատասխանը դեռևս չկա, քաղաքապետի հետ միասին մանրամասն ուսումնասիրում ենք՝ կան բազմաթիվ խնդիրներ և ոչ միայն ճարտարապետական:

Ինչպես նշեցի կան ոչ միայն ճարտարապետական խնդիրներ, որնց հետևանքը դառնում է ճարտարապետությունը, որի պատասխանատվությունն ինձ վրա է: Օրինակ՝ Թումանյան 26 հասցեի բակում կառուցվող բնակելի շենքի վերաբերյալ մոտավոր 15 բնակչի դժգոհություն կա:

Հարցից մի փոքր հեռանամ՝ արդյոք ուզում ենք, որ Երևան քաղաքում պահպանվեն ահռելի քանակությամբ ավտոտնակներ, վատ վիճակի բնակելի տներ, այսինքն՝ այն ամենն ինչ ունենք մեր առջև և տեսնում ենք ամեն օր: Ինչ ճանապարհ կա այդ բակերը վերջապես երեխաներին և բնակիչներին վերադարձնելու համար: Կա մի քանի տարբերակ: Առաջինը՝ վաղը մեր երևանցիները, ամեն մեկը, իր ունեցած սեփական ավտոտնակը քանդի և տարածք ստեղծի իր երեխայի խաղալու համար: Ուզում եմ իմանալ, քանի՞ քաղաքացի կհրաժարվի իր ավտոտնակից, որպեսզի ազատի բակի տարածությունը: Կարծում եմ՝ մոտ տասը քաղաքացի: Այսինքն՝ սա տարբերակ չէ: Արդյոք մենք գոհ ենք այս իրավիճակից, որ այսօր կա, իհարկե՝ ոչ: Մենք ուզում ենք տեսնել մեր բակերը, ծառերը, խաղահրապարակները, որոնք ժամանակին կային, բայց հետագայում օկուպացվեցին ավտոտնակներով, անհասկանալի բնակելի տներով և այլն:

Երկրորդ տարբերակը հետևյալն է՝ որևէ կառուցապատող, ով հնարավորություն կունենա քանդել ավտոտնակները, կկառուցի տրամաբանական մի կառույց՝ չխախտելով ոչ մի քաղաքաշինական օրենք, քանդված ավտոտնակների փոխարեն, իր կառուցած շենքի բնակիչներին կապահովի ավտոկանգառով, կբարեկարգի տարածքը, և ամենալավ տարբերակը կլինի, որպես սոցիալական պարտավորություն, առաջին հարկում կազմակերպի մանկապարտեզ:

Վերադառնամ Թումանյան 26 հասցեի բակում կառուցվող շենքի վերաբերյալ բարձրացրած աղմուկին: Ժամանակին այդ նախագիծն ստացել է «ԱՊԶ»՝ տասնութ հարկի և մեծ չափերի հասնող կառույցի համար: Մենք համաձայնության եկանք կառուցապատողի հետ, որպեսզի հարկայնությունը իջնի մինչև ութ հարկի և կառույցի ծավալը հնարավորինս փոքրացավ: Ինստիտուցիայի բոլոր հաշվարկները, բոլոր նորմատիվները, որոնք անհրաժեշտ են այդ տարածքում կառուցապատման համար՝ բավարարված են:

Հաջորդ տարբերակն այն է՝ թույլ չտալ ոչ մի կառուցապատում: Այսինքն, այն տները, որոնք երկար տարիներ Աբովյան փողոցի հատվածում տասնյակ տարիներ քանդված էին մնացել, փոշին բարձրանում էր և ամբողջ քաղաքի կենտրոնը ծածկում, թողնենք այդպես:

Ի վերջո, պետք է հասկանանք, թե ի՞նչ ենք ուզում ստանալ մեր քաղաքից, ի՞նչ պայմաններ են ծանրացած մեզ վրա և ի՞նչ ժառանգություն ունենք, որի տակից պետք է դուրս գալ: Ժառանգությունը միայն այն չէ, թե ժամանակին **18**-հարկանի շենքի թույլտվություն է տրված եղել այդտեղ, այլ նաև այն է, որ ավտոտնակներով և վատ շինություններով ամբողջ քաղաքն օկուպացվել է: Սա է խնդիրը: Ամեն մի խնդիր ունի որոշակի պատասխան և որոշակի պատճառ:

Եթե գիտեք, Թումանյան-Հանրապետության փողոցի բակում, ահռելի մեծ փոստրակ կա: Ժամանակին այդտեղ շինարարության թույլտվություն է տրվել, շինարարությունն սկսվել էր, այնուհետև ինչ-ինչ պատճառներով ընդհատվեց: Այդ փոստրակն արդեն տասը տարի այդ վիճակում է: Հարց եմ տալիս Ձեզ՝ պետք է այդ փոստրակի հարցը ի վերջո լուծել, թե՞ ոչ: Իհարկե ցանկալի է այդ փոստրակը փակել, ծառեր տնկել և երեխաների համար խաղահրապարակ ստեղծել: Բայց խնդիրը նրանում է, որ փոստրակն ունի սեփականատեր: Մեր խնդիրն այսօր այն է, որ պետք է հասկանալ, ինչ հարաբերություններ պետք է ունենալ սեփականատերերի հետ, ինչպես անել, որ չխախտենք սեփականատերերի իրավունքները, ինչպես անել, որ նրանք էլ չխախտեն քաղաքի օրենքները: Ես գործում եմ հետևյալ տարբերակով՝ Երևանի սահմաններում, մինիմալ գոհաբերությամբ ինչ հնարավոր է անում ենք, որպեսզի կարողանանք ինչ-որ բան խելքի բերել: Խոստումների կատարման առումով՝ ես, այնուամենայնիվ, փորձում եմ կատարել:

Միքայել Մանրիկյան

-Պարոն Մեսչյան, իմ այս ելույթն օգնության և ձեռք մեկնելու մասին էր, թե ինչով կարող ենք աջակցել Ձեզ, որպեսզի նման կառույցներ վեր չխոյանան նման խնդրահարույց վայրերում, որտեղ կան բակային փոքր տարածքներ: Կիրառել այս մեթոդը՝ մեկին թույլատրել, մյուսին՝ ոչ, դա սխալ է: Այո, կա սեփականատեր, ով ժամանակին այդ տարածքը սեփականաշնորհել է, սակայն պետք է Դուք, քաղաքապետարանը սեփականատիրոջ հետ միասին գտնեք մի ճանապարհ, որպեսզի նման խնդիրներ չունենանք:

Նշեցիք, որ Թումանյան **26** հասցեում **15** բնակիչ է բողոքարկում, դա բավարար հիմք է, որպեսզի շենքը վեր չխոյանար: Դա նաև հիմք չի հանդիսանում շինթույլտվություն տալ այն հանգամանքի համար, որ կառուցապատողն ասել է այդտեղ մանկապարտեզ է լինելու կամ բակը բարեկարգելու է: Եկեք մտածենք մեր քաղաքի ճարտարապետական տեսքի մասին: Իմ

հորդորը միայն դա էր: Մենք Ձեզ հետ պատրաստ ենք յուրաքանչյուր հասցե այցելել, խոսել բնակիչների հետ և հնարավորինս կանխարգելել հետագա խնդիրները:

Արթուր Մեսչյան

-Շնորհակալություն: Մեզ օգնելու համար առաջին հերթին հարկավոր է ստեղծել օրենսդրական դաշտ, որպեսզի կարողանանք չեղարկել ժամանակին տրված շինթույլտվությունները և թույլ չտանք կառուցապատում:

Այս հարցում մենք բավականին թույլ ենք, որովհետև նրանք կարող են դատի տալ և միանշանակ դատը կշահեն, քանի որ նրանք ամբողջ փաթեթով ամրագրված և պաշտպանված են, իսկ քաղաքն այսօր պաշտպանված չէ: Եթե կարողանանք չեղարկել խնդրահարույց վայրերում շինթույլտվությունները, կառուցապատողին կառաջարկենք այլ վայր, որտեղ խնդիրներ չեն առաջանա: Եթե այս հարցում կարողանաք մեզ օգնել, մենք շատ շնորհակալ կլինենք:

Հայկ Մարության

-Վերջին ժամանակներում շատացել են այն դեպքերը, երբ քաղաքացին դիմում է քաղաքապետարան «ԱՊԶ» ստանալու համար՝ այն վայրերում, որտեղ ժամանակին, կամ այժմ, այդի է: Բնականաբար, պարոն Մեսչյանի հետ միասին կտրուկ մերժում ենք, այն դեպքում, որ այդ տարածքը տվյալ դիմողի սեփականությունն է: Հարց է առաջանում, թե ինչպե՞ս է այդ հողատարածքը դարձել նրա սեփականությունը: Այս դեպքում, պարոն Համբարձումյանի հետ համատեղ, հավաքում ենք այդ փաթեթը՝ ուղարկում դատախազություն, այդպիսի ուղարկված գործերը բավականին շատ են:

Մեծ ակնկալիքներով սպասում ենք, որ այդ գործերն ի վերջո բացահայտվեն և ամենակարևորը՝ այդ հողերը և այգիները վերադառնան և լինեն մեր համայնքի տիրապետության տակ: Հետաքրքիրն այն է, որ սեփականատերը կարող է դիմել դատարան և շանսերը մեծ են, որ դատը կշահի: Դա նրա սեփականությունն է և ցանկանում է շենք կառուցել՝ ասելով, որ ներդրումներ է իրականացնելու:

Նաև լինում են դեպքեր, որ տնտեսվարող սուբյեկտի հետ համաձայնության ենք գալիս փոխանակման, սակայն այստեղ ամենամեծ խնդիրն է ի հայտ գալիս՝ չկա համարժեք հողատարածք: Երևանում հողակտորներ չեն մնացել, ամբողջը սեփականաշնորհվել է նախկին իշխանությունների՝ տարբեր ներկայացուցիչների կողմից: Մա լուրջ խնդիր է, ինչպես նշվեց, մեր ժառանգությունն է և ժամանակի ընթացքում փորձում ենք այս ամենին լուծում տալ:

Հայկ Մարության

- Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Շնորհակալություն: Շեշտեմ, որ իմ բարձրագրած հարցերի պատասխանատուն բացառապես Դուք եք, ես Ձեզ եմ ուղղում իմ հարցերը:

Ինձ ասացին, որ Երևանում կա գրեթե երկու հարյուրին հասնող ՀՈԱԿ և միայն մեկ ՀՈԱԿ-ի տնօրենն է հիմա ներկա ավագանու նիստին: Ես խնդրեցի կա՛մ հեռացնեք տվյալ անձնավորությանը, կա՛մ հրավիրեք մյուսներին:

Դուք սկզբում չգիտեիք, թե որ ՀՈԱԿ-ի տնօրենն է այստեղ, մինչ ես չասացի, որ այստեղ է գտնվում «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրենը, այդ ժամանակ ասացիք, որ Դուք եք հրավիրել: Քաղաքապետը և ավագանու խմբակցություններն իրավունք ունե՞ն նիստի հրավիրել մարդկանց, ովքեր օրակարգային հարցերի շուրջ առնչություններ չունեն: Հարցս հետևյալն է՝ ինչ առնչություն ունի տվյալ ՀՈԱԿ-ի տնօրենն այսօրվա նիստի օրակարգային հարցերին:

Հյակ Մարություն

-Այդ պահին, քանի որ, չնշեցիք ՀՈԱԿ-ը, ես չհասկացա, թե ում մասին է խոսքը:

Այո, մենք ունենք երկու հարյուր ՀՈԱԿ և բոլորին չեմ կարող հրավիրել այստեղ: Այսօր ես հրավիրել եմ մեկ ՀՈԱԿ-ի և մեկ համայնքային հիմնարկի տնօրենների, որոնք շատ ակտիվ գործունեություն են ծավալում և թեժ գծի ամենաշատ արձագանքներն ունենք այդ հարցերով՝ դա «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ն է և «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկն է: Պարոն Գրիգորյանին և պարոն Բեգոյանին հրավիրել եմ, որովհետև ակնկալվում է, որ պետք է հարցեր լինեն աղբահանության և թափառող կենդանիների վերաբերյալ, քանի որ գործակարգավարական ամեն խորհրդակցության ժամանակ հարցերի մեծամասնությունը այդ հարցերի շուրջ են: Քանի որ, հարց ու պատասխանը պարբերաբար է լինելու, այն հարցերը, որոնք ակտուալ են լինելու այդ ժամանակահատվածում, իմ կողմից պատասխանատուներին կհրավիրեմ, որպեսզի հենց իրենցից լսենք պատասխաններ, քանի որ այդ պատասխանները հետաքրքիր են նաև ինձ:

Անի Խաչատրյան

-Արձագանքեմ առաջին հարցիս վերաբերյալ: Աղբահանության հիմնարկի հետ կապված այսօր օրակարգային հարց կա՝ հաստիքացուցակներն ավելացնելու համար, նրա ներկայությունը հասկանալի է, իսկ մյուս ՀՈԱԿ-ի տնօրենի ներկայության ընտրությունը հասկանալի չէ: Բայց ես կարող եմ ասել ինչպես եք ընտրել՝ իմ ֆեյսբուքյան գրառման պատճառով է այստեղ:

Ինչևէ, հաջորդ հարցս:

Համաձայն Երևանի ՏԻՄ օրենքի՝ Երևան քաղաքի ավագանին Երևանի տեղական ինքնակառավարման բարձրագույն ներկայացուցչական մարմին է: Փաստացի՝ մեր լիազորությունների մեջ է մտնում քաղաքապետի և քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների գործունեության վերահսկողությունը, և սրանից բխում է, որ մեր այցելությունը «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ և տեսանելի խնդիրների բարձրաձայնումն օրենքի սահմանում էր: Ես, մինչ օրս չեմ կարողանում հասկանալ մեր այցի ժամանակ տվյալ ՀՈԱԿ-ի տնօրենի այդ օրվա ջղաձիգ պոռթկումները և դրան հաջորդած նույն ջղաձգությամբ՝ իր և իր փոխտնօրենի ֆեյսբուքյան գրառումները: Ի դեպ՝ փոխտնօրենի աշխատանքն ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում միայն ֆեյսբուքում գրառումներ անելու մեջ է:

Պարոն քաղաքապետ, նոր Հայաստանի հեղափոխությունից հետո, Ձեր կողմից նորանշանակ կադրերը պետք է գիտակցեն իրենց պատասխանատվությունը նոր Հայաստան կառուցելու գործին ուղղված, այլ ոչ թե փորձեն վայելել իրենց պաշտոնները, ինչպես նախկինները: Պահանջում եմ, որ Դուք կարգի հրավիրեք իրենց լիազորությունների սահմանները չճանաչող Ձեր նորանշանակ կադրերին: Այս դեպքում «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն պարոն Բեգոյանին՝ «ում լույսը խավարով է պատվել ու որի խավարը այլևս դժվար թե լույս առկայծի», սա ի դեպ պարոն Բեգոյանի ֆեյսբուքյան գրառումից մի հատված էր:

Եվ ես նշում եմ, որ պատասխանը բացառապես Ձեզնից եմ սպասում, ես Ձեզ եմ ներկայացրել իմ պահանջը՝ նորանշանակ կադրերին կարգի հրավիրելու: Ինչու չեք արձագանքում այդ ջղաձիգ վերաբերմունքի համար, ավագանու խմբակցության նկատմամբ: Այսինքն՝ հատուկ արտոնություններ եք տալիս նախընտրելի ՀՈԱԿ-ի տնօրենին և հատուկ արտոնություններով էլ այսօր այս դահլիճ եք հրավիրել միայն իրեն:

Հայկ Մարության

- Առաջին հերթին ուզում եմ ասել, որ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ը կայացած կառույց է, երբևիցե քաղաքապետարանը նման կառույց չի ունեցել: Մինչ օրս հարցերը լուծվել են շներին կրակելով, տանջամահ անելով, շան ձագերին ջրի մեջ խեղդելով կամ ուղղակի հողով ծածկելով: Այս անմարդկային վերաբերմունքն է եղել առայսօր, իսկ հիմա մենք ունենք պրոֆեսիոնալներով համալրված ՀՈԱԿ, որը շատ ճիշտ աշխատանք է կատարում:

Մոտավորապես երկու ամսից նոր կլինիկայի շինարարությունը կվերջանա: Կարող եմ ասել, որ տարածաշրջանում միակն է լինելու: Այնտեղ լինելու են լավագույն պայմանները կենդանիների ստերջացման, չիպավորման և բոլոր գործողությունները կատարելու համար:

Երբ մենք ստանձնեցինք իշխանությունը, այնքան էր շատացել թափառող շների քանակը, որն իրապես հատում էր սահմանագիծը և պրոցեսն անվերահսկելի էր դարձել: Եղած պայմաններում ճգնաժամային լուծումներ են տրվել, որովհետև մենք երկու տարբերակ ունեինք՝ կամ գնայինք մասսայական ոչնչացման կամ մեծ պատասխանատվություն վերցնեինք մեզ վրա և հայտարարություն անեինք, ստերջացնելու միջոցով կարգավորեինք թվաքանակը: Սակայն նախընտրեցինք երկրորդ տարբերակը՝ մարդասիրականը: Շատ միջազգային կազմակերպություններ են եկել, տեսել են մեր մասնագետների աշխատանքը և շատ բարձր են գնահատել:

Իսկ ինչ վերաբերում է Ձեր այցին՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնը նույնպես մեր ենթակայության տակ է, բայց ավագանու անդամը չի կարող մտնել վիրահատարան և տեսնել ինչպես է վիրաբույժն աշխատում կամ մտնել հիվանդասենյակ և տեսնել հիվանդներին: Դա ամենևին չի նշանակում, որ ավագանու ցանկացած անդամ կարող է մտնել օրինակ մանկապարտեզ և տեսնել, թե երեխաներն ինչպես են քնած: Իմ երեխան նույնպես այցելում է մեր ՀՈԱԿ-ներից մեկը, ես, որպես ծնող, դեմ կլինեմ, որ ավագանու անդամն անհամապատասխան հագուստով և առանց զգուշացնելու գնա և տեսնի իմ երեխային: Այս վերահսկելու պրոցեսը պետք է կանոնակարգված լինի: Ստուգումները նույնպես ունեն իրենց կանոնները:

Անի Խաչատրյան

-Որ այդ ՀՈԱԿ-ը համապատասխան դիմակներ, հագուստներ ունենար և տրամադրեր շատ լավ կլիներ:

Պարոն քաղաքապետ անդրադարձեք հարցիս այն մասին, թե ինչու՞ ենք Երևանի բյուջեից աշխատավարձ հատկացնում տվյալ ՀՈԱԿ-ի փոխսնօրենին, ով զբաղվում է միայն ֆեյսբուքով:

Հայկ Մարության

-Ես՝ «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատանքը գնահատում եմ գերազանց: Շատ շնորհակալ եմ իրենց, որ մեր ունեցած պայմաններում, հապճեպ կարողացել են հասնել այս արդյունքին, ինչ հիմա ունենք: Սա հրաշալի արդյունք է, որը պնդում են նաև մասնագետները և ակնկալում եմ, որ շուտով կավարտվի մեր կենտրոնի կառուցումը և կտեղափոխվենք այնտեղ:

Անի Խաչատրյան

-Պարոն քաղաքապետ, չանդրադարձաք հարցիս այն հատվածին, թե ինչու՞ ենք քաղաքի բյուջեից աշխատավարձ հատկացնում փոխսնօրենին, ով աշխատանքային ամբողջ ժամերին ֆեյսբուքում գրառումներ կատարելով է զբաղված:

Հայկ Մարության

-Եթե ես ասում եմ, որ նրանց աշխատանքը գնահատում եմ գերազանց, ուրեմն ես համարում եմ, որ այնտեղ բոլորն իրենց տեղում են և իրենց աշխատանքը ճիշտ են անում, դա Ձեր կարծիքն է:

Անի Խաչատրյան

-Կարծում եք, որ դա նորմա՞լ է: Ձեր աշխատողն է, հեռացրեք աշխատանքից:

Հայկ Մարության

-Մենք ունենք աշխատակիցներ, մասնավորապես, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունում, ովքեր հաճախ են լինում ֆեյսբուքում, բայց դա չի նշանակում, որ իրենց աշխատանքը լավ չեն կատարում: Պարոն Բեգոյան երկու խոսքով անդրադարձեք:

Արմեն Բեգոյան

-Ես հասկանում եմ տիկին Խաչատրյանի վրդովվածությունը և նպատակը՝ ցեխ շաքոտել այն կառույցների վրա, ովքեր, անհամեստորեն ասած, աշխատանքի բավականին լավ ցուցանիշներ ունեն:

Անդրադառնամ նրանց այցին: Այս զավեշտալի պատմության ամենամեծ զավեշտը, որ վիրահատարան են ներխուժել այն պահին, երբ վիրահատություն էր կատարվում և խոսել սանիտարական վիճակից՝ դա անընդունելի է: Իրենց կողմից արված «ուղիղ եթերի» ընթացքում բարձրացրած բողոքներից միակ փաստը, որի հետ կհամաձայնեմ, դա այդտեղի, իրենց ասած, խայտառակ սանիտարական վիճակն էր, որն ստեղծել էին հենց իրենք՝ փողոցային հագուստով ներխուժելով, վիրավորելով անասնաբույժներին և աշխատակիցներին:

Անի Խաչատրյան

-Ձեր աշխատակիցներն էլ էին փողոցային հագուստով: Պարոն քաղաքապետ, տեսնելով Ձեր կողմնապահությունը, ես կվիրավորվեի մնացած երկու հարյուր ՀՈԱԿ-ների տնօրենների փոխարեն: Ինչնէ, նորից ասեմ, պարոն Բեգոյան, Ձեր խավարն այլևս չի լուսանալու, ես դա խոստանում եմ:

Հայկ Մարության

- Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Կիրակոսյան, խնդրե՛մ:

Լիլիթ Կիրակոսյան

-Մեկ հարց ունեմ: Ժամանակին Ձեզ խնդրել էի, որպեսզի զբաղվենք էթիկայի հանձնաժողով ստեղծել: Դուք համաձայնել էիք: Եվ ամեն նիստի ժամանակ համոզվում եմ, որ դա մեր առաջնային հարցերից մեկն է: Ստեղծել հանձնաժողով, որ այս բղավոցների համար առաջինն ավագանիներին կարգի հրավիրի: Ե՞րբ կստեղծվի նման հանձնաժողով:

Հայկ Մարության

-Պարոն Կարեն Համբարձումյանի կամ պարոն Հարություն Թունյանի հետ կքննարկենք, թե ի՞նչ է պետք, որպեսզի այս հանձնաժողովն ստեղծվի և որքա՞ն ժամանակում: Խնդրում եմ ինձ կզեկուցեք այդ մասին:

Լիլիթ Կիրակոսյան

-Ես ինքս պատրաստակամ եմ այս աշխատանքների մեջ ներգրավվելու և կարծում եմ մեր խմբակցությունից ավագանու շատ անդամներ կցանկանան ներգրավվել այս հարցը կարգավորելու համար: Ես որպես ավագանու անդամ, կարծում եմ սրանից առաջնային հարց չկա:

Հայկ Մարության

-Ես մյուս խմբակցություններից ավագանու անդամների նույնպես կիրավիրեմ, որպեսզի մասնակից լինեն այս գործընթացին: Կարծում եմ կարելի է ստեղծել:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ Բարգավաճ Հայաստան խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է վթարային շենքերին, ես՝ որպես Երևան քաղաքի ավագանու անդամ և որպես ակտիվ երևանցի, խնդրում եմ Երևանում առկա վթարային շենքերի հարցը լուծելու վերաբերյալ ՀՀ վարչապետի հետ ֆեյսբուքյան ուղիղ եթերի միջոցով թափանցիկ քննարկում ունենալ: Արգումանյան **10** և **17** շենքերի բնակիչները դիմել են Կառավարություն և, եթե չեմ սխալվում, այդ նամակը ՀՀ վարչապետի կողմից ուղարկվել էր Ձեզ, որպեսզի այդ հարցին լուծում տաք, և, եթե Դուք չեք այդ հարցի հասցեատերը, ինչու՞ է վարչապետը նամակն ուղարկում Ձեզ:

Երկրորդ հարցս վերաբերում է Աջափնյակ վարչական շրջանում գտնվող Գևորգ Չաուշի անվան հրապարակը երեկոյան ժամերին ավտոռալիի նմանվելուն, խնդրում եմ քայլեր ձեռնարկել և ճանապարհային ուստիկանության հետ համատեղ տեսախցիկներ տեղադրել, որպեսզի վարորդները զսպված լինեն և նմանատիպ արարքներ թույլ չտան:

Հայկ Մարության

-Շնորհակալություն պարոն Հարությունյան, անկեղծ ասած, արդեն խոսել ենք այս հարցի մասին, եթե ցանկանում եք, որպեսզի մենք իրականացնենք ուստիկանության գործառույթները, խնդիր չկա, կարող եք ավագանիով նախագիծ կազմել, ուղարկել ԱԺ և Կառավարություն, թող ասեն, վերջ, նաև ճանապարհային ուստիկանության գործն եք անելու, սկսենք անել: Նույն գանգերը նաև Երևանի քաղաքապետարանում ենք ստացել և

վերահասցեավորում ենք ճանապարհային ուստիկանություն: Ինչ վերաբերում է ՀՀ վարչապետի հետ լայվին՝ կներեք, բայց ՀՀ վարչապետն ինքն է որոշում երբ, ինչ միջոցառում իրականացնել:

Հայկ Մարության

- Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան:

Թեհմինա Վարդանյան

- Պարոն Հայկ Սարգսյան, Դուք ասացիք, որ հինգ միլիարդ երկու հարյուր միլիոն դրամով կարողանալու ենք իրականացնել աղբահանության գործընթացը, այդ գումարն իր մեջ ներառում է հարկերը թե՛ ոչ, որովհետև, եթե չեմ սխալվում մասնավոր ընկերությունն այդ հինգ միլիարդ երկու հարյուր միլիոն դրամից վճարում է նաև հարկերը: Այսինքն՝ մենք էլ ենք վճարելու հարկեր և այդպես է հաշվարկն արվելու, որովհետև չգիտեմ հարկերն ինչքան է լինելու՝ կես թե մեկ միլիարդ, երեք հարյուր կամ չորս հարյուր միլիոն: Ուզում եմ հասկանալ հինգ միլիարդ երկու հարյուր միլիոն դրամն օգտագործվելու է այդ գործընթացի վրա, թե հարկեր էլ կլինեն, որովհետև եթե հարկերը դուրս են գալու, դա չի ստացվում, որ մենք նույն գումարով աղբահանություն ենք իրականացնելու:

Հայկ Մարության

- Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

- Պատասխանը ճշգրիտ լինելու նպատակով, խնդրում եմ ասեք, ո՞ր հարկերի մասին է խոսքը:

Թեհմինա Վարդանյան

- Պարոն Սարգսյան, հինգ միլիարդ երկու հարյուր միլիոն դրամից վճարվում են հարկեր, կարծեմ, հարկերը ներառված են այդ գումարի մեջ: Այսինքն՝ մասնավոր ընկերությունը վճարում է հարկեր՝ եկամտային կամ կուտակային և այլն: Ուզում եմ հասկանալ քաղաքապետարանը դա ևս վճարելու է, թե՛ ոչ, այսինքն՝ քաղաքապետարանի ՀՈԱԿ-ը հարկերից զե՞րծ է լինելու:

Հայկ Սարգսյան

- Ես դրա համար ուզում էի հասկանալ, ինչպիսի հարկեր նկատի ունեիք, որպեսզի պատասխանն ամբողջական լինի, կփորձեմ անդրադառնալ բոլոր հարկերին: Սանիտարական մաքրման նախորդ ընկերությունը՝ Սանիթեք ընկերությունը, վճարում էր շահութահարկ, ավելացված արժեքի հարկ, գույքահարկ և այլ հարկեր: Նոր ստեղծված ընկերությունը՝ բյուջետային հիմնարկը, չի վճարելու շահութահարկ, ազատված է ավելացված արժեքի հարկից, բացառապես հանդիսանալու է հարկային գործակալ

եկամտահարկի գծով: Այն հարկային բեռը, որ կրում էր Սանիթեք ընկերությունը, այս ընկերությունն այդ բեռը չի կրելու, բայց հասկանալով հարցի ենթատեքստը՝ ասեմ, որ այն բեռը, որը թոթափվելու է հարկերի գծով Սանիթեք ընկերության կողմից վճարված, այստեղ վերականգնվելու է մեքենաների ամորտիզացիայի արժեքի չափով և դրա արդյունքում մենք ունենալու ենք նույն հինգ միլիարդ երկու հարյուր միլիոն դրամի ծախսը:

Թեմինա Վարդանյան

-Շնորհակալություն, անդրադառնամ 2-րդ հարցին. 7-8 ամիս է այս դահլիճում հնչեցնում եմ այդ հարցը և ստանում եմ հեղհեղուկ պատասխաններ, որ գործընթաց է ընթանում և խոսում են բնակիչների հետ:

Խնդրում եմ պատասխանել Արզումանյան հ.10 շենքի հետ կապված ի՞նչ գործընթաց է արվել վերջին մեկ ամսվա կտրվածքով և, եթե անդառնալին տեղի ունենա՝ շենքը փլվի, մասնավորապես՝ մուտքերից մեկը, ինչ պատասխան ենք տալու բնակչությանը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը:

Հայկ Մարգարյան

-Ինչպես վերջին մեկ ամսում, այնպես էլ նախկին ամիսների ընթացքում նույն ինտենսիվությամբ աշխատանքներ են իրականացվել և իրականացվում: Բնակիչների հետ տարվող աշխատանքը հանգել է վերջին փուլին և նախորդ անգամ դրա մասին բարձրաձայնեցի: Բնակիչներին առաջարկվել է ծայրահեղ վտանգ ներկայացնող իրավիճակից խուսափելու համար քաղաքապետարանի միջոցների հաշվին վարձակալել բնակարաններ և տեղափոխվել անվտանգ տարածքներ, որոնք հարիր են նորմալ կենցաղային պայմաններին միջին վիճակագրական քաղաքացու համար:

Հարց է բարձրացվել արդյոք իրենց բնակարանների մակերեսին և ներքին հարդարմանը համարժեք բնակարաններ կարող են վարձել, մենք ասել ենք այո: Ի սկզբանե, որ հարցը բարձրացված է եղել կյանքին և առողջությանն ուղիղ հակացուցված բնակարանային պայմաններին, այդ ժամանակ մենք այս խնդրի լուծումը տվել ենք որպես այդ նույն խնդրի համատեքստում: Հետագայում, բնակիչների կողմից նոր հարցեր բարձրացվեցին, թե գույքը նոր բնակարաններ ո՞վ է տեղափոխելու, ինչու՞ պետք է մեքենա վարձելու համար ծախսել 10000 դրամ, որ տան գույքը տեղափոխեն անվճար տրամադրվող նոր բնակարան, և այս բնույթի բազմաթիվ հարցեր: Այս հարցերի պատասխանները քաղաքապետարանը չի տվել և չի տալու, որովհետև դա մեր լիազորություններից դուրս է, թե՛ ֆինանսական և թե՛ իրավական առումներով:

Կրկնում եմ, բնակիչների հետ կոնտակտը հանգել է վերջին փուլին և մենք պատրաստակամ ենք վարձել այդ բնակարանները: Մի փոքրիկ նկատառում՝ զարգացումները վերջին ամսվա աշխատանքների արդյունքների մասին է, բնակիչները նաև բարձրացրել են հարց՝ թե ինչու՞ վարձակալության պայմանագրերն առաջարկվել են կնքել մինչև դեկտեմբեր, պատասխանը շատ հստակ է. մեր պայմանագիրը բնակչի հետ դա քաղաքի ֆինանսական խոստումն է բնակչին և քաղաքն այսօր չի կարող խոստում տալ, բացի այն իրավունքներից, որը տվել է ավագանին բյուջեն հաստատելու տեսքով:

Ավագանին հաստատել է քաղաքի մեկ տարվա բյուջեն՝ մինչև դեկտեմբերի 31-ը և մենք իրավասու չենք քաղաքացուն տալ խոստում ավելին քան այդ բյուջեն է, խոսքը ֆինանսական խոստումի մասին է: Առաջարկվել է կնքել պայմանագիրը, բյուջեն հաստատելուց հետո, շարունակենք այդ պայմանագիրը, ինչը որ այս պահին արված է Արզումանյան 17 շենքի 1-ին մուտքի 4 բնակարանատերերի հետ:

Թեմիհնա Վարդանյան

- Պարոն Սարգսյան, ես Արզումանյան հ.17 շենքի մասին չեի խոսում, ցավում եմ այդ շենքում ես չեմ գտնվել և խնդիրներին ծանոթ չեմ, հարցը վերաբերում էր Արզումանյան հ.10 շենքին:

Հայկ Սարգսյան

-Ես խոսում էի Արզումանյան հ.10 շենքի մասին, բայց օրինակում նշեցի Արզումանյան հ.17 շենքը:

Թեմիհնա Վարդանյան

-Այսինքն՝ վերջին մեկ ամսվա ընթացքում եղել են գործընթացներ և Դուք պատրաստվում եք գոնե այն բնակիչներին, ովքեր համաձայն են այս պահին լքել բնակարանները, տարհանել և ապահովել բնակարաններով: Ճի՞շտ եմ հասկանում:

Հայկ Սարգսյան

-Այո, միանշանակ, իրենց հետ հանդիպման ժամանակ անձամբ բարձրաձայնել եմ այս մասին:

Թեմիհնա Վարդանյան

-Պարոն փոխքաղաքապետ, շնորհակալ եմ: Այս իրավիճակում զավեշտալին այն է, որ չգիտեմ որ կողմին հավատալ, քանի որ յուրաքանչյուր նիստին այս խնդիրը բարձրացնում եմ, Դուք պատասխանում եք, իսկ բնակիչներն ասում են, որ հանդիպումների ժամանակ նման խոսակցություններ չեն եղել:

Հայկ Մարգարյան

-Խնդրում եմ Ձեզ, բնակիչների հետ հաջորդ հանդիպմանը ներկա գտնվեք, կամ ինքներդ նախաձեռնեք հանդիպում, ես նույնպես կգամ, կամ հանդիպում կազմակերպենք մեզ մոտ ու նույն տեքստը կրարձրաձայնեմ բնակիչների ներկայությամբ:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալ եմ:

Հայկ Մարտիթյան

-Հարջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արսեն Կարապետյան:

Արսեն Կարապետյան

-Մենք խոսում էինք Թումանյան հ. 32 հասցեի մասին, ես ուղղակի չեմ կարող Թումանյան հ. 30 հասցեի հարցը չբարձրացնել, որովհետև դրա մասին ամեն օր բնակիչների հետ խոսում ենք: Այս հասցեում կա տրված շինթույլտվություն, բայց քաղաքաշինական և հակահրդեհային տեսչության կողմից տրված եզրակացության համաձայն՝ նախագծում կան բազմաթիվ խախտումներ:

Ուզում եմ իմանալ, այդ տեսչության եզրակացությունը չի՞ կարող հիմք հանդիսանալ, որ նախկինում տրված շինթույլտվությունը վերանայվի:

Հայկ Մարտիթյան

-Մենք այս մասով վերջերս քննարկում ենք ունեցել, զանգահարել եմ տեսչական մարմնի ղեկավար պարոն Շահբազյանին, նաև հարցը քննարկել ենք իրավաբանական վարչության պետ Հարություն Թունյանի հետ, որ այդ եզրակացության հիման վրա կարողանանք շինթույլտվությունը, ենթադրենք, չեղարկենք:

Պարոն Թունյան խնդրում եմ իրավական մասով անդրադառնաք այդ հարցին:

Հարություն Թունյան

-Կազուսը կայանում է նրանում, որ շինթույլտվությունը վարչական ակտ է և տեսչական մարմինը, որը ներկայացնում է դիրքորոշում, վարչական վարույթի մասնակից չէ: Քաղաքապետի հանձնարարությամբ, ներկայումս քննարկումներ են կազմակերպվում տեսչական մարմնի հետ գործառույթները հստակ տարանջատելու և կանոնակարգելու համար:

Հայկ Մարտիթյան

-Շնորհակալություն, պարոն Թունյան:

Պարոն Կարապետյան, խնդիրը նրանում է, որ այս պահին հաշվի առնելով տեսչական մարմնի կողմից խախտումների վերաբերյալ ներկայացված եզրակացությունը, միանգամից չենք կարող շինթույլտվությունը չեղարկել: Պետք է որոշակի պրոցես անցնի, բայց այդտեղ

խնդիր կա, որ պետք է բողոքարկում լինի, այսինքն՝ օրենսդրական ճշգրտում կա: Այս պահի դրությամբ, պատասխանեմ, որ ոչ, այդ եզրակացությամբ հնարավոր չէ դա անել:

Արսեն Կարապետյան

-Շնորհակալություն, 2-րդ հարցին անդրադառնամ: Բնակիչների կողմից ստացել եմ մի քանի տեղերի վերաբերյալ հարցումներ, բացի դրանից երեկ դեպք է տեղի ունեցել՝ աշխատակցուհուս կողքը քար է ընկել: Գիտեմ, որ նախագծի հետ նաև հանձնվում է շինթույլտվություն ստանալու համար շինարարության կազմակերպման նախագիծ, որը ինչ-որ չափով ձևական բնույթ է կրում: Գիտեմ նաև, որ այս ամենին քաղաքապետարանը հետևում է, բայց քաղաքում բազմաթիվ շինարարություններ կան, որոնք բնակչության համար անվտանգ չեն, օրինակ՝ «Այրարատ» կինոթատրոնի հարևանությամբ արված լուսանկարներում երևում է, որ բանվորը պատ է շարում շատ զգույշ, որովհետև եթե սխալվի, այդ քարը կընկնի մարդկանց վրա: Միգուցե պետք է մշակել նոր կարգ և խստացնել շինարարության հետ կապված անվտանգության ապահովման հարցերը:

Հայկ Մարության

- Շնորհակալ եմ պարոն Կարապետյան, որ անդրադարձաք այդ հարցին, գրեթե յուրաքանչյուր երկուշաբթի անցկացվող գործակարգավարական խորհրդակցությունների ժամանակ ես առաջնահերթ անդրադառնում եմ շինհրապարակների անվտանգությանը և պարբերաբար ճարտարապետության և քաղաքաշինության և քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունների, հասարակական կարգի պահպանության ծառայության պետերին ասում եմ, որ ավելի խստացնեն և ավելի ուշադիր լինեն: Սակայն ամեն տեղ չէ, որ մենք ունենք գործառույթ, շատ տեղերում տեսչական մարմինը պետք է ստուգումներ իրականացնի:

Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության Ռոբերտ Դարբինյանը:

Ռոբերտ Դարբինյան

-Շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառու ընկերության կողմից աշխատանքների անվտանգության նկատմամբ մենք հսկողություն իրականացնելու լիազորություններով օժտված չենք: Բնականաբար, նշված գործառույթը վերապահված է տեսչական մարմին: Ինչ վերաբերում է հետիոտնի և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովելուն, քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված պահանջներով, ինչպես նաև ավագանու որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմաններով, խոսքը վերաբերում է շինհրապարակների պատշաճ կազմակերպմանն ու կահավորմանը, մեր, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցների և

հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցների կողմից իրականացվում են ամենօրյա շրջայցեր: Կառուցապատողները նախագրուշացվում են շինհրապարակները կարգի բերելու նպատակով և շաբաթվա կտրվածքով կազմվում են մեկ տասնյակից ավելի համապատասխան արձանագրություններ:

Հայկ Մարության

-Ես տեսչական մարմնի ղեկավար պարոն Շահբազյանի հետ վերջերս խոսելիս ասել եմ, որ իրականում սա այն տարբերակը չէ, մենք կուզենայինք ևս լիազորություններ ունենալ և մասնակցել այդ գործընթացին: Գիտեք Սարալանջի փողոցի դեպքը՝ շինթույլտվությունը տրվել է, բայց փոխարենը լրիվ այլ կառույց է կառուցվել: Դրա մասին տեղեկացրել եմ պարոն Շահբազյանին և խնդրել եմ, որ իրենց աշխատակիցներն աշխատանքները կասեցնեն և տեղում իրականացնեն ստուգումներ: Այս պահին աշխատանքները կասեցված են: Կարևորն այն է, որ շինարարության ընթացքում քաղաքապետարանն օրենքով անելիք չունի, բայց մենք ուշադիր հետևում ենք և խնդիրների դեպքում տեղեկացնում տեսչական մարմին:

Պարոն Կարապետյան, Ձեզ ևս խնդրում եմ միանալ մեր թիմին և խախտումներ արձանագրելու դեպքում տեղեկացնել քաղաքապետարան կամ տեսչական մարմին:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան:

Արման Անտոնյան

-Հարգելի գործընկերներ, կարծում եմ օրենսդիր-գործադիր այս հարց ու պատասխանը ենթադրում է կառուցողական մոտեցում, ինչի արդյունքում կարող են լուծվել այս կամ այն խնդիրները և հարցերը: Խոսքը վերաբերում է ոչ միայն ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցությանը, այլ նաև մյուս խմբակցություններին:

1-ին հարցը վերաբերում է տրանսպորտային ներկայիս համակարգին: Ուզում եմ բարձրաձայնել վաղուցվանից առկա մի հարցի մասին, որը վերաբերում է վարորդների մեծամասնության կամ որոշակի խմբի ծխելուն, ուղևորների հետ վարվելաձևի ոչ ցանկալի երևույթին: Վարորդների մեծամասնությունը երևի չեն գիտակցում իրենց աշխատանքի ահռելի պատասխանատվությունը: Գիտեմ, որ վերջերս հանդիպել եք բոլոր տնտեսվարողների հետ և քննարկել եք տարբեր հարցեր:

Հավելեմ, որ վերջերս մեր աշխատանքային խումբը հանդիպում է ունեցել ոլորտի գրեթե բոլոր ներկայացուցիչների հետ և, որպեսզի ճանապարհային ուստիկանությունը չմեղադրվի, մտածեցինք մի մեխանիզմ, որ վարորդի ծխելու կամ վարվելակերպի հետևանքով պատժվի տվյալ ընկերությունը՝ ի դեմս ընկերության ղեկավարի:

Արդյոք այս նոր գործընթացում պայմանագրերի վերանայում չի նախատեսվում, որը ավելի խիստ կետ կունենա վարորդների վերահսկման ուղղությամբ և արդյոք չենք կարող կատեգորիկ բացառել վարորդների ծխելու դեպքերը:

Հայկ Մարության

-Ձեր հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Ինչպես Սանիթեք ընկերության պարագայում, վստահեցնում եմ Ձեզ, որ մենք այնպիսի իրավիճակում ենք, որ պայմանագրերի կետերի խստացումը չի աշխատի: Պետք է հստակ մեխանիզմ լինի, որ վարորդները պատասխանատվության ենթարկվեն: Վստահեցնում եմ, որ պայմանագրերի խստացումը ոչ մի արդյունք չի տա: Կարծում եմ, որ առաջին հերթին պետք է քաղաքացիների կողմից վերահսկողություն լինի և քաղաքացիները պահանջատեր լինեն: Խնդիրը նոր չէ և խնդրի լուծումը միանգամից հնարավոր չէ իրականացնել:

Ինչ վերաբերում է, որ ծխելը խստիվ արգելվի, նշեմ, որ օրենքն արգելում է՝ վարելու ընթացքում ծխելը, բայց շատ դեպքերում տեսնում ենք, որ վարորդները ծխում են: Հարց է առաջանում, թե ո՞վ է վերահսկելու այդ գործընթացը:

Պարոն Անտոնյան, եթե ունեք հստակ քայլեր, որոնց միջոցով հնարավոր կլինի պայքարել, առաջարկում եմ, ներկա տրանսպորտային իրավիճակի պայմաններից ելնելով, կազմակերպել քննարկումներ և, եթե հնարավոր լինի այս համակարգում ներդրում անել, ապա ներդրում իրականացնենք, որպեսզի այդ վատ սովորույթները վերջանան:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն պարոն Սարգսյան, գիտենք Ձեր հետևողական աշխատանքի մասին և գիտենք ինչքան ժամանակ է պահանջվելու տրանսպորտային իդեալական համակարգ ունենալու համար: Բնականաբար, վերահսկման այդ ձևաչափին եզրահանգել էինք և քաղաքապետի թույլտվությամբ Ձեզ կներկայացնենք մեր եզրահանգման արդյունքները:

2-րդ հարցը վերաբերում է Կենտրոն վարչական շրջանին: Նախ շնորհակալություն եմ հայտնում Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին սրտացավ գործունեության համար, սակայն ուզում եմ բարձրաձայնել մի ցավոտ հարց: Երևանում զբոսնելիս ես ամեն անկյունին նայում եմ որպես զբոսաշրջիկ և արդյոք, որպես զբոսաշրջիկ, կարող եմ գնահատել Երևան քաղաքը որպես զբոսաշրջային գրավիչ քաղաք: Խոսքը վերաբերում է Հանրապետության հրապարակում տիրող իրավիճակին, հատկապես աշխատանքային ժամերից հետո, ուր առևտրականները փոշու մեջ վաճառում են քաղցր բամբակ: Հավելեմ հանրության համար, որ

սա օրենքների կարագավորման բացթողում է, այլ պարագայում դրանք միանգամից կվերանային:

Ուզում եմ բարձրաձայնել, որ շուտով Երևան քաղաքում կհյուրընկալենք ՏՏ միջազգային համաժողովը, որին ներկա կգտնվեն տարբեր երկրներից ժամանած հայտնի մարդիկ և պատվարժան մասնագետներ ու ցանկալի չէր լինի, որ նրանք մայրաքաղաքը տեսնեն այդ վիճակում:

Արդյոք մինչև այդ օրենքների կարգավորումները, կարող ենք Կենտրոն վարչական շրջանում, մասնավորապես, Հանրապետության հրապարակում մեր կամ ոստիկանության ուժերով բացառել այդ երևույթները:

Հայկ Մարության

- Ձեր հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Վիկտոր Մնացականյանը:

Վիկտոր Մնացականյան

- Եթե նկատել եք վերջին երկու ամսվա ընթացքում Հանրապետության հրապարակում ապօրինի առևտուր չկա: Խոսքը վերաբերում է շրջիկ առևտրին, մասնավորապես՝ փուչիկների վաճառքին, որը հարկային մասով կանոնակարգված է:

Արման Անտոնյան

- Պարոն Մնացականյան, ես արդեն շնորհակալություն եմ հայտնել Ձեր սրտացավ աշխատանքի համար, սակայն կան տեսանելի ոչ ցանկալի երևույթներ, մասնավորապես՝ նշված համաժողովի անցկացման ժամանակահատվածում Հանրապետության հրապարակում չլինեն այն գիղ-վարորդները, ովքեր մեքենաների վրա փակցնում են ինչ-որ պաստառներ, քանի որ դա Հանրապետության հրապարակին հարիիր չէ:

Վիկտոր Մնացականյան

- Ինչ վերաբերում է մեքենաների վրա փակցված գովազդին, դա ևս օրենքի բացթողումն է, «Գովազդի մասին» օրենքի շուրջ պատգամավորների հետ կայացել են քննարկումներ և ներկայացրել ենք առաջարկություններ: Հարցը կայանում է նրանում, որ մեքենաների վրա տեղադրված գովազդը որևէ կարգավորում չունի: Պայքարել ենք նաև վազող տողով և օտարալեզու գովազդներ տեղադրելու համար: Համատեղ աշխատում ենք նաև քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության հետ և բնականաբար այդ օրերին կլինի ավելի մաքուր վիճակ: Կրկին հավելեմ, որ Հանրապետության հրապարակում, Հյուսիսային պողոտայում, Մարյան փողոցում, Կասկադի ու օպերայի հարակից տարածքներում փողոցային առևտրի ղեպքեր, մասնավորապես՝ քաղցր բամբակի վաճառքի ղեպքեր երկու ամիս է չի գրանցվել:

Նշեմ, որ դժվար է կարգավորել նաև փողոցում նվազող երաժիշտների գործունեությունը, այս հարցը Ձեր գործընկերներ՝ Լիլիթ Պիպոյանի, Գայանե Մելքում Մելքումյանի, Արթուր Իսպիրյանի հետ քննարկել ենք, կատարել ենք շրջայցեր: Հյուսիսային պողոտայում որոշ երաժիշտների հետ բանավոր պայմանավորվածություն է ձեռքբերվել հնչեցվող երաժշտության մասով, յուրաքանչյուր մեկ ժամից հետո վայրը փոխելու և 100մ հեռավորություն պահպանելու համար: Նշեմ, որ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի բաժնի աշխատակիցները պարբերաբար կատարում են շրջայցեր՝ նմանօրինակ դեպքերը բացառելու համար: Քաղցր բամբակի վաճառքի դեպքեր եթե Դուք ևս կնկատեք, խնդրում եմ տեղեկացնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյան, խնդրեմ:

Գրիգորի Երիցյան

-Առաջին հարցն ուղղում եմ պարոն Մեսչյանին: Դուք այսօր իրավացիորեն խոսեցիք, որ մեր քաղաքը խլել և բաժանել են տարբեր մարդկանց մեջ, և մեր առաքելությունն է փնտրել ուղիներ՝ այդ երևույթը դադարեցնելու ուղղությամբ: Որոշ ժամանակ առաջ մամուլով տեղեկատվություն էր պտտվում, որ Երևանում կառուցվելու է 71-հարկանի շենք «Անմոռուկ» անունով, և ինձ հետաքրքրում է, արդյոք, Երևանի քաղաքապետարան ներկայացվել է նման նախագիծ, և ո՞րն է Ձեր դիրքորոշումը:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանը:

Արթուր Մեսչյան

-Եթե այդպիսի շենք կառուցվի, ինչու ոչ, բայց որտե՞ղ, և ինչու՞: Առաջին հերթին մենք չզիտենք թե որտեղ, որովհետև նախագիծ չկա և չզիտենք ինչու, որովհետև դեռ չունենք դրա պատասխանը: Բայց ընդհանրապես, եթե Երևան քաղաքում լինի մեկ հատ 71-հարկանի շենք, ինչու ոչ, թող լինի հեռու, մի տեղ, լանջի վրա: 71-հարկանի շենքը դա նոր շինարարական տեխնոլոգիա է, ինչու ոչ թող լինի:

Գրիգոր Երիցյան

-Այսինքն Ձեզ հետ նման նախագիծ չի քննարկվել:

Արթուր Մեսչյան

-Ոչ

Գրիգորի Երիցյան

-Երկրորդ հարցը վերաբերում է քաղաքային ստորգետնյա անցումների մատչելիությանն այն քաղաքացիների համար, ովքեր հենաշարժողական խնդիրներ ունեն, և

հատկապես, իրենց հետաքրքրում է, ե՞րբ են կյանքի համար վտանգավոր ստորգետնյա անցումների թեքահարթակները վերջապես կառուցվելու, քանի որ Երևանի քաղաքապետարանն ունեցել է բյուջե քաղաքի մատչելիությունն ապահովելու համար, բայց գումարները փռված են: Հանրապետության հրապարակի ստորգետնյա անցումը և մետրոպոլիտենի մյուս կայարաններ տանող ստորգետնյա անցումները ե՞րբ են հարմարեցվելու հաշմանդամություն ունեցող մարդկանց, մասնավորապես, հենաշարժողական խնդիրներ ունեցողներին:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը:

Հրայր Մարգարյան

-Այս պահին նախագծման փուլում է Հալաբյան և Լենինգրադյան փողոցների խաչմերուկի անմիխթար վիճակում գտնվող ստորգետնյա անցումը: Հիմա նախագծման աշխատանքներ են տարվում, և այնտեղ առաջին անգամ կիրառվելու է այն մոտեցումը, որով հնարավոր կլինի շարժման խնդիրներ ունեցող քաղաքացիների տեղափոխման համար միջավայրի ստեղծումը: Եթե ծրագիրն ունենա հաջողություն, ապա այն նաև կլիմայի միտացնենք մնացած ստորգետնյա անցումներում:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրեմ:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, երկու հարց ունեմ: Առաջին հարցս վերաբերում է ոռոգման համակարգին, որը, ըստ էության, մեր Երևանի թոքերի՝ կանաչապատ տարածքների երակներն են և զարկերակներն են, որ մենք փորձում ենք վերականգնել: Խնդրում եմ պարզաբանել ի՞նչ փուլում է ոռոգման ցանցի վերականգնման պրոցեսը, որ ավելի տեսանելի լինի այն ահռելի աշխատանքը, որը կատարվում է հիմա ներկայիս քաղաքային իշխանության կողմից:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը:

Հրայր Մարգարյան

-Ոռոգման ցանի հետ կապված այս տարի արդեն մարտ ամսվանից բոլոր վարչական շրջաններում սկսվել է ոռոգման ցանցի քարտեզագրումը և այս պահի դրությամբ ունենք 5 վարչական շրջան, որտեղ դեռ աշխատանքները չեն սկսվել: Բավականին ահռելի աշխատանք է կատարվել, քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության և կանաչապատման ՓԲԸ-ների կողմից: Բացի քարտեզագրումից, քարտեզագրել

ենք նաև այն հիմնական խողովակները, որտեղից սնուցվում է ամբողջ Երևան քաղաքը և գույքագրել ենք խնդիրներ, որոնց անհապաղ լուծումներ է հարկավոր:

Այս պահի դրությամբ կմատնանշեմ խնդիրներից երկուսը՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջաններում ունենք **1,9** կմ երկարությամբ խողովակ **500** տրամագծով, որը բավականին վնասված է և մեծ քանակությամբ ջրի կորուստ է տեղի ունենում, որը հնարավորություն չի տալիս Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջաններում ռոտգումը իրականացնել միաժամանակ: Խնդրի հետ կապված պատվիրվել է նախագիծ, նախագծանախահաշվային փաստաթղթերն են պատրաստվում, փոխվել է գնման օրենսդրությունը և նվազագույն ժամկետ սահմանվել է **45** օր: Այսինքն՝ նախագծման բոլոր աշխատանքները **45** օրում են կատարվում և կարծում եմ, որ արդյունքները կունենանք մինչև հոկտեմբերի **10**-ը:

Դրանից հետո պետք է մրցույթ լինի, որպեսզի հնարավորություն տա այդ **1,9** կմ խողովակն ամբողջությամբ փոխարինել, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջաններում զուգահեռ ռոտգում իրականացնել:

Մյուս խնդիրը, որը մատնանշել ենք Արաբկիր վարչական շրջանում է, այս տարի Արաբկիր վարչական շրջանում ռոտգումը բավականին վատ էր, կար երկու խնդիր, առաջինը հիմնական խողովակն էր, որից ջուրը համապատասխան քանակությամբ չէր գալիս, այժմ ուսումնասիրություններ են իրականացվում, որպեսզի մենք կարողանանք Հրազդան գետից առանձին ջուր վերցնել, կառուցել նոր պոմպակայան, Արաբկիր վարչական շրջանում ռոտգման ցանցը բավականին հին է և համապատասխան ճնշման դեպքում այնտեղ խողովակները պայթում են և ջուրը լցվում է փողոց:

Այս պահի դրությամբ արդեն Հակոբ Հակոբյան փողոցի նախագծանախահաշվային փաթեթը պատրաստ է, Արամ Խաչատրյան փողոցում ամբողջությամբ ռոտգման ցանցի փոփոխություն ենք իրականացնում, ինչպես նաև որդեգրել ենք մոտեցում, որ տարբեր վարչական շրջաններում՝ հիմնականում այգիներում լինեն խորքային հորեր: Այս պահի դրությամբ ուզում, որ համայնքը վեց խորքային հոր ունենա և աշխատանքներ են իրականացվում, որպեսզի գտնեն այն տեղը, թե որտեղ պետք է այդ հորերը փորվեն, քանի որ ժամանակին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում եղել է խնդիր և ծախսելով մոտավորապես **9** մլն. դրամ՝ խորքային հորը փորվել է և ջուր չի գտնվել, այնուհետև՝ **20** մ հեռավորության վրա համապատասխան տեխնոլոգիայի միջոցով այդ խորքային հորը փորվել է և այժմ այդ տարածքում ջուր կա:

Ինչպես նաև ջրային կոմիտեի կողմից կառուցվում է երկու մեծ ջրագիծ, առաջինը՝ Հալաբյան փողոցի սկզբնամասից մինչև Ծիծեռնակաբերդ **315** մմ խողովակով, որը

հնարավորություն է տալու Ծիծեռնակաբերդի բարձունքը ևս ապահովել հավելյալ ջրով, քանի որ այնտեղ ունենք պոմպակայան, որը Հրագղան գետից է ջուրը վերցնում: Նաև մեկ առանձին գիծ էլ կառուցվում է, որը անցնելու է Էրեբունիով, Նորագավթով, այժմ գրություն ենք ուղարկել, որպեսզի կարողանանք Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների համար համապատասխան հանգույցներ տանք՝ ռոտման ցանցից օգտվելու համար: Այս պահի դրությամբ հավատացնում եմ Ձեզ, որ առաջնային այդ խնդրով ենք զբաղվում, որպեսզի հաջորդ տարի նմանատիպ խնդիրներ չունենանք: Այնուամենայնիվ՝ Երևան քաղաքի ռոտումն ամբողջովին կախված է Քանաքեռ ՋԷԿ-ում մեր ունեցած ջրամբարից:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն և երկրորդ հարց:

Մենք նոր տեխնոլոգիաներ ենք ներդնում պոլիկլինիկաներում, որը, կարծում եմ, կհեշտացնի հերթերի կառավարման գործընթացը: Խնդրում եմ պարզաբանել, ե՞րբ կավարտվի այս պրոցեսն ամբողջապես, և ինչպիսի արդյունքներ ենք սկսելու դրանից:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն հարցի համար, պարոն Միրզոյան: **13** պոլիկլինիկաներում գործում է էլեկտրոնային հերթագրման համակարգը, այսինքն՝ քաղաքացիների, շահառուների ֆիզիկապես պոլիկլինիկա գալու և հերթագրվելու կարիքը չկա, կարող են հեռախոսազանգով հերթագրվել իրենց ցանկացած օր և ժամ, գնալ բժշկի, առանց հերթ կանգնելու ստանալ կտրոնը և բարձրանալ իրենց տեղամասային թերապևտի մոտ: Մինչև տարեվերջ պլանավորում ենք, որ բոլոր պոլիկլինիկաներում լինի այդ հերթագրման առաջին փուլը, որը հետո կդառնա շարունակական, այսինքն՝ ոչ միայն թերապևտների, այլև նեղ մասնագետների մոտ էլ կներդրվի:

Այս պահին միայն թերապևտների մոտ է, որովհետև հիմնականում իրենց մոտ է միշտ հերթ լինում, պոլիկլինիկա հաճախած շահառուն առաջին հերթին պետք է թերապևտի մոտ մտնի: Ակնկալում ենք, որ դա կնվազեցնի դժգոհությունները, որոնք արդարացված են, և խնդիր է առաջանում, որ մարդիկ չեն կարողանում իրենց հարմար ժամին մոտենալ: Ակնկալում ենք, որ հարմար կլինի նաև տարեց շահառուների համար, ովքեր **1-3** օր շուտ իրենց հարմար ժամի կարող են գրանցվել և այցելել պոլիկլինիկա:

Հայկ Մարության

-Նաև նույնը հեռախոսազանգով է:

Մերգեյ Հարությունյան

-Բոլոր պոլիկլինիկաներում կա հեռախոսահամար, ասեմ, որ ֆեյսբուքյան էջով տարածել ենք բոլոր պոլիկլինիկաները, որոնցում ներդրված է համակարգը և քաղաքացիները կարող են զանգահարել և հերթագրվել իրենց հարմար հարմար օր և ժամի:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն, հանգամանալից պատասխանների համար, որոնք ավելի տեսանելի են դարձնում այն հսկայածավալ աշխատանքները, որոնք իրականացվում են քաղաքային իշխանության կողմից:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալ եմ, հարցս վերաբերում է այն պատասխաններին, որոնք ստանում ենք Ձեզ ուղղած մեր դիմումներից հետո կազմակերպական վարչության միջոցով: Պետք է ասեմ, որ ժամանակ առ ժամանակ ստանում ենք տարօրինակ պատասխաններ, ուզում եմ դրանցից մեկին անդրադառնալ: Առաջարկով դիմել էի, որպեսզի թիվ 17 պոլիկլինիկայի դիմաց գտնվող Գարեգին Նժդեհի կիսանդրին, որը իմ կարծիքով շատ վատ տեղում է՝ շրջապատված խանութներով և կրպակներով, առաջարկել էի տեղափոխել Երևանի պուրակներից մեկը: Պատասխան էի ստացել, որ. «Ձեր ուղարկած նկարով հնարավոր չէ եզրակացություն ունենալ, թե արձանն իրենից ինչ մշակութային արժեք է ներկայացնում»: Ուզում էի այդ նամակ գրողին ասել, կներեք, որ պրոֆեսիոնալ նկարիչ չեմ և կարող էին առաջարկել, որն էլ ճիշտ կլիներ, գնային տեղում ուսումնասիրեին կիսանդրու մշակութային արժեքը:

Հարցս հետևյալն է. քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնից ո՞վ է նմանատիպ դիմումներին պատասխան տալիս, որ ես այնպիսի նկար տրամադրեի, որի որակից պարզ դառնար, թե արձանն ի՞նչ մշակութային արժեք ունի:

Հայկ Մարության

-Ես ընդհանուր ասեմ, պարոն Զաքարյան, ինչպես կարող է դա լինել: Ճարտարապետական բլոկը հիմնականում զբաղվում է բազմաբնակարան շենքերով, ավելի մեծ կառույցներով և այլն: Ցավոք սրտի՝ այսօր թե՛ ճարտարապետական բլոկը՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ պարոն Միկե Աղաբեկյանի մասով, թե՛ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետ Անդրանիկ Սեդոյանի, շատ ծանրաբեռնված են: Իմ կողմից հանձնարարական կա, որպեսզի բոլոր նախագծերը, ինչպես Դուք նշեցիք, որոնք գալիս են և հասնում են այն փուլին, որ պետք է տրվի շինթույլտվություն, պետք է անձամբ գնան, տեղում նայեն հարկայնությունը

և տարբեր պարամետրեր: Շատ լավ գիտեք, որ այս ամենի դանդաղ աշխատելու հետ կապված կան բազմաթիվ բողոքներ: Այդ բողոքները շատացել են, բազմիցս անդրադարձել եմ այդ խնդրին, քանի որ առաջ, շատ կոնկրետ էր, ում շենքը պիտք է կառուցվի, ումը՝ ոչ, ումը պետք էր շատ արագ հարցերը լուծում էին, ումը՝ ոչ տարիներով չէր լուծվում:

Այժմ բոլորը հավասար պայմաններում են հայտնվել, բոլոր շենքերի կառուցման համար պետք է կոնկրետ տեղում դիտվի, բոլոր գործերը մեկ առ մեկ քննվեն և վերջում շատ օբյեկտիվ պատասխան տրվի: Այո՛, ո՛չ, եթե այո, ինչ հարկայնություն, ինչ ծավալ, կողքն ինչքան կանաչապատում պետք է լինի, ավտոկայանատեղերի քանակը և այլն: Այս ծավալի մեջ, պարոն Ջաքարյան, ամենայն հավանականությամբ, քաղաքային իշխանություններն առավելագույնս առաջնահերթությունը, բնականաբար, տվել են հենց բազմաբնակարան շենքերի շինարարությանը:

Իրականում ինչ պետք է արվեր, աշխատողը պետք է գնար, նայեր, գնահատեր և Ձեզ պատասխան տար, ուղղակի ֆիզիկապես հնարավոր չէ դա անել և սկսում են առաջնահերթություններով գործել: Եթե ավելի պարզ խոսեմ, այսօր **16**-հարկանի շենքի քննարկումը և շինարարությունն իր հետ բերող ֆինանսական հոսքերը դեպի քաղաք և տնտեսական աճը և այլն, նախընտրելի է, քան Ձեր բարձրացրած հարցը, եթե դնենք նույն նժարի վրա:

Համաձայն եմ, պետք է այնպես անել, որ դա էլ հասցնենք: Եթե երկարացնեինք ժամկետը, վստահաբար կգնային, կգնահատեին, Ձեզ կպատասխանեին, բայց գիտեք, որ լիմիտավորված են և շատ հաճախ այդ պատասխանները, երբ հասնում են ինձ, կանչում եմ համապատասխան վարչության պետին կամ պատասխանատուին, որ բացատրություն տա, հաճախ ասում են, որ օրենքը պարտադրում է ժամկետի մեջ ինչ-որ պատասխան տալ, ֆիզիկապես չեն հասցնում: Հիմա դիմումները **3-4** անգամ շատացել են, գրում ենք պատասխան, իհարկե բավարար պատասխան չէ, բայց էլի պատասխան է: Ասում են, որ, այնուամենայնիվ, զանգում են, գնում են պատասխանի հետևից: Սրա մասին է խոսքը:

Լևոն Ջաքարյան

-Արձագանքեմ. կարող է նման պատասխան ստանալուց հետո քաղաքացին ինձ նման շատ վատ կարծիք կազմի, եթե ես հնարավորություն ունեմ այս հարցը նորից բարձրացնելու, քաղաքացին կարող է ուղղակի հիասթափվել:

Հայկ Մարության

- Կներեք, պարոն Ջաքարյան, այն, որ սա անընդունելի պատասխան է, չի քննարկվում: Ուղղակի փորձեցի վերլուծել, բայց չի նշանակում, որ սա ընդունելի է, այսպիսի պատասխան չպետք է գնա քաղաքացուն: Այսպիսի պատասխան գրողը պետք է պատժվի,

ճիշտ է, կարող եմ վերլուծել, հասկանալ ինչ է, չէ՞ որ այդ հարցն ուղղելու համար միայն չպետք է պատժենք: Միևնույն է, եթե պատժենք էլ, վաղը ժամանակ չունեցավ չի անելու, այսպիսի պատասխան է ուղարկելու: Այս վերլուծությունն արվում է, պարոն Ջաքարյան, որպեսզի հարցին վերջնական լուծում տրվի, ոչ թե այս պահին պատժենք, պարզավճարից զրկենք, վաղը հասցնելու են անել:

Լևոն Ջաքարյան

-Հարցը բարձրացնում եմ ընդհանուր՝ խնդրելով հարգել ավագանու ինստիտուտը և ավագանու անդամներին շատ հստակ ու նորմալ պատասխան տրվի, ի դեպ, նորմալ և լավ պատասխանների մասին չեմ խոսում, որոնք նույնպես կան: Պետք է ազնիվ լինեմ և ասեմ, որ լինում են շատ հստակ և նորմալ պատասխաններ:

Պարոն Մնացականյան, այս նույն նամակի շրջանակներում Ձեր տեղակալներից չգիտեմ ով ինձ խորհուրդ էր տվել, կիսանդրու կողքի կրպակների անօրինականությունը ստուգելու համար դիմել կադաստր:

Հաջորդ հարցս վերաբերում է Ավան վարչական շրջանի Ծարավ աղբյուրի փողոցի հ. 169/1 և 161/1 հասցեներում տեղադրված արգելափակոցներին: Հարցս հետևյալն է, քանի որ օրենքը բացակայում է, արգելափակոցներն ի՞նչ սկզբունքով են տեղադրվում:

Հայկ Մարության

-Շատ հետաքրքիր հարց էք տալիս, վերջերս պարոն Հարություն Թունյանը և Կարեն Համբարձումյանը իմ հանձնարարությամբ հետազոտություն էին անցկացրել, քաղաքապետի խորհրդական Կարեն Համբարձումյանին կխնդրեմ մի քանի նախադասությամբ անդրադառնալ այս հարցին:

Կարեն Համբարձումյան

-Հարգելի պարոն Ջաքարյան, այդ խնդիրը պարբերաբար ծագում է տարբեր վարչական շրջաններում այն իմաստով, որ համատարած բնույթ է կրում: Որոշ վարչական շրջաններում եղել է վարչական շրջանի ղեկավարի գրավոր թույլտվության հիման վրա, որոշ վարչական շրջաններում ուղղակի բնակիչներն են ինքնակամ տեղադրել: Վերջին խնդիրը ծագեց Թումանյան 26 հասցեի բազմաբնակարան շենքի կառուցման հետ կապված, երբ Սայաթ-Նովայի պողոտայի վրա նման մի բան էր դրված, որն ուղղակի սահմանափակում էր բակ մուտք գործելու հնարավորությունը: Մենք եկանք ընդհանուր հայտարարի, որ, կա՛մ հարկավոր է այդ արգելափակոցից օգտվելու հնարավորություն ընձեռվի բակի բոլոր բնակիչներին, կա՛մ պետք է ապամոնտաժվի, որովհետև դա համայնքի տարածքի վրա գտնվող, ըստ էության, ինքնակամ կառույց է և համապատասխան որոշման դեպքում պետք է ապամոնտաժվի: Սակայն, միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ

արգելափակոցները տեղադրելով շենքի և բակի բնակիչները լուծում են, այսպես ասած, իրենց անվտանգության հարցերը, որովհետև տարբեր մարդիկ են գալիս կայանում, իրենք չեն կարողանում իրենց մեքենաները դուրս բերել, երեխաների տեղաշարժի մասով կա խնդիր, քանի որ շենքի բնակիչ չհանդիսացող վարորդները բակում խաղացող երեխաների հանդեպ բարեխիղճ վերաբերմունք չեն ցուցաբերում և այլն: Խնդիրը բազմաշերտ է և այս պահին միանշանակ լուծում, ցավոք սրտի, չկա:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, ուղղակի ուզում եմ ասել, որ հետայսու այս թույլտվությունները, խնդրում եմ ամենայն զգուշությամբ ու լրջությամբ ուսումնասիրել, քանի որ, եթե նույնիսկ **20** կամ **30** ստորագրությունով դիմում լինի, պետք է հաշվի առնենք արդյոք չենք սահմանափակում **1000** հոգու ազատ տեղաշարժը: Շնորհակալություն:

Հայկ Մարություն

- Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Պիպոյան, խնդրե՛մ:

Լիլիթ Պիպոյան

-Իմ հարցը վերաբերում է Կարեն Դեմիրճյանի արձանին: Ես ուզում եմ կարճ անդրադարձ անել և հիշեցնել ներկաներին, որ Կարեն Դեմիրճյանի անվամբ մետրոպոլիտեն, մարզահամերգային համալիր, դպրոց, փողոց և թանգարան ունենք: Հիմա ուզում ենք ավելացնել վեցերորդը՝ տեղադրել արձան: Մեծ հարգանք եմ տածում Կարեն Դեմիրճյանի հիշատակի հանդեպ:

Ես փորձեցի հետաքրքրվել արձան տեղադրելու պատմությամբ: Տեղեկացա, որ **2011թ.** եղել է ավագանու որոշում, մրցույթ է հայտարարվել և ոչ ոք չի շահել: Հետո **2014թ.** հայտնվել է մի քանդակագործ՝ Տիգրան Արզումանյան, ում նախագիծն ընտանիքը չի հավանել և հիմա նորից հայտնվում է մեկ այլ հեղինակ, որի առաջարկն ընտանիքը հավանել է, որոշումը կա, տեղը կա, որը պետական տարածք է և տրամադրում է Կառավարությունը: Ինձ հետաքրքրում է, արդյոք իրավաչափ է, որ ընտանիքն է ընտրում հեղինակին, իրավաչափ է, որ արձանի գեղարվեստական որակի մասին ոչ մի մասնագիտական մարմին հավանություն և կարծիք չի տալիս: Այդ հավանությունը, ինչքան հասկանում եմ, գլխավոր ճարտարապետի պատասխանատվության ներքո է:

Ես արձանը չեմ տեսել և կարծիք չունեմ, սակայն կարծում եմ, որ մասնագիտական մարմինը պետք է կարծիք տա: Փորձեցի այդ հարցերի պատասխանն ստանալ ԱԺ-ի աշխատակազմի ղեկավարի օգնականից, սակայն աշխատանքային օրվա վերջում ասաց, որ չի կարող պատասխանել, քանի որ քաղաքապետարանից է եկել այդ փաթեթը: Դրա համար,

պարոն Մարության, Ձեզ եմ դիմում: Եվ վերջին ինձ հուզող հարցը՝ արձանի ֆինանսավորման աղբյուրը և չափը ամբողջությամբ:

Հայկ Մարության

-Տիկին Պիպոյան, այդ հարցին դեռ պետք է անդրադառնանք, դեռ շրջանառության մեջ չկա այդ հարցը, ավագանու նիստի օրակարգում պետք է ներառվի, հանձնաժողովներով անցնի: Մեզ Կառավարությունից դեռևս միայն գումար է փոխանցվել, և մենք ընդունել ենք, եթե չեմ սխալվում, երեք միլիոնի չափով՝ պատվանդանի համար: Այդ աշխատանքների պրոցեսը դեռ չկա:

Լիլիթ Պիպոյան

-Բայց չպե՞տք է այդ պրոցեսներից հետո գումարը փոխանցվեր:

Հայկ Մարության

-Շատ հնարավոր է այդ պրոցեսն այնպիսի ընթացք ունենա, որ այդ գումարները ետ փոխանցվեն:

Լիլիթ Պիպոյան

-Այսինքն՝ առանց որոշում ընդունելու գումարը փոխանցվե՞լ է:

Հայկ Մարության

-Այդ հարցը դեռևս ավագանու նիստի օրակարգ չի մտել, և ավագանին չի ընդունել:

Լիլիթ Պիպոյան

-2011թ. մտել է, նորի՞ց պետք է մտնի: Ես գիտեմ, որ որոշում կա:

Հայկ Մարության

-Այդ որոշումն անգամ, եթե կա, միննույն է այս պրոցեսը պետք է անցնի:

Պարոն Վիրաբյան, խնդրեմ պարզաբանեք:

Տիգրան Վիրաբյան

- Արձանի էսքիզային տարբերակ կար՝ համաձայնեցված ընտանիքի հետ, և կար այդ գործընթացն իրավական դաշտ բերելու խնդիր: Այսինքն՝ տվյալ քանդակագործը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ նշելով, որ ցանկություն ունի Երևան քաղաքում տեղադրել արձան: Որից հետո Երևանի քաղաքապետարանը համապատասխան գրությունով և էսքիզով դիմել է Կառավարություն՝ ներկայացնելով, որ քանդակագործը տվյալ էսքիզով և ընտանիքի հավանությամբ ցանկություն ունի տեղադրել Կարեն Դեմիրճյանի արձանը: Այդ փաստաթղթային փաթեթը քաղաքապետարանից ուղարկվել է Կառավարություն և մնացած գործընթացները կառավարության տիրույթում է: Երևանի քաղաքապետարանը ֆինանսապես արձանի պատրաստմանը չի մասնակցում, քանի որ բյուջեով նախատեսված գումար չունի: Մնացած գործընթացներն իրականացնում է Կառավարությունը:

Լիլիթ Պիպոյան

-Այսինքն՝ այդ գործընթացը չի՞ շրջանցվել, դեռ սպասվում է ապագայում:

Տիգրան Վիրաբյան

-Մենք անձնական համաձայնությունները դրել ենք իրավական գործընթացի մեջ, տվել ենք ուղղություն, ինչպես կազմակերպել գործընթացը, որպեսզի իրենք լինեն իրավագոր:

Լիլիթ Պիպոյան

-Եվ երկրորդ հարցս: Այն, որ օգոստոսին գրքերի շնորհանդես պետք է լիներ, ե՞րբ է նախատեսվում:

Հայկ Մարություն

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Տիլիին Պիպոյան, այդ գրքի շնորհանդեսը չի լինելու: Մենք քննարկել էինք այդ շնորհանդեսը կազմակերպել, սակայն վարչությունում ունեցել ենք քննարկում, չեմ ցանկանա այստեղ փակագծերը բացել, մենք առանձին կգրուցենք, դրանից հետո, եթե Դուք նպատակահարմար գտնեք, բարձրաձայնեք, թե ինչու չի արվում այդ գործընթացը: Միայն կասեմ, որ Երևանի քաղաքապետարանը նպատակահարմար չի գտնում կազմակերպել այդ գրքի շնորհանդեսը: Դա պարտադիր լիազորություն չէ, որ պետք է իրականացնենք: Երբ գրքի հեղինակների հետ քննարկվել է շնորհանդեսը կազմակերպելու հարցը, այդ ընթացքում առաջացել են խնդիրներ, որոնք մեզ ստիպել են այդ շնորհանդեսը չիրականացնել: Նույնը զեկուցել ենք քաղաքապետին:

Լիլիթ Պիպոյան

-Ուրեմն մեկ այլ պարզ ձևով այդ գրքերը կհասցնենք իրենց:

Հայկ Մարություն

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան:

Սաթենիկ Մկրտչյան

-Ինձ է ներկայացվել մի նամակ, որը քաղաքացին ստացել է քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանի կողմից: Ի պատասխան քաղաքացու հարցադրմանը՝ թիվ 98 մանկապարտեզի դիմաց արհեստական անհարթություն կառուցելու առաջարկի վերաբերյալ տրվել է շատ կարճ պատասխան՝ նպատակահարմար չէ: Անհրաժեշտ է քաղաքացու հարցերին տալ սպառիչ պատասխան, որպեսզի հետագայում ամեն մի չպատասխանված հարցը 2-րդ կամ 3-րդ անգամ չբարձրաձայնվի, ուստի՝ գնահատելով մարդկանց աշխատանքը, հորդորում եմ պատասխանները հնարավորինս լինեն սպառիչ:

Խնդրում եմ պատասխանել ինչու՞ նպատակահարմար չէ թիվ **98** մանկապարտեզի դիմաց կառուցել արհեստական անհարթություն:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

Գրիգոր Հարությունյան

-Հարցին անդրադառնամ երկու կարևոր պատճառով. նախ արհեստական անհարթություններ կառուցելու նպատակահարմարությունը միայն շինարարության և բարեկարգման վարչությունը չի որոշում, նաև դիրքորոշում են հայտնում աշխատակազմի տրանսպորտի վարչությունը և ճանապարհային ոստիկանությունը: Հարցը կայանում է նրանում, որ ճանապարհային ոստիկանությունն արհեստական անհարթություններ կառուցելու վերաբերյալ հիմնականում ոչ մի բացասական պատասխան չի տալիս: Տվյալ մանկապարտեզում այս տարի իրականացվում են շինարարական բազմաձևավալ աշխատանքներ, հայտարարված են մրցույթներ և նախագծերը շուտով կունենանք և աշխատանքները կշարունակվեն: Յուրաքանչյուր արհեստական անհարթություն կառուցելու համար պահանջվում է **300-400** քմ ասֆալտի ծավալ: Նշեմ, որ այս տարի արդեն թվով **70** արհեստական խոչընդոտ է տեղադրվել Երևան քաղաքում և ամբողջ քաղաքում կառուցել թմբեր ճիշտ չէ: Նշված տարածքում եթե կարիք կա կառուցելու արհեստական խոչընդոտ, առաջարկում եմ աշխատակազմի տրանսպորտի վարչությունը և ճանապարհային ոստիկանությունը ներկայացնեն իրենց հավանությունը:

Հայկ Մարության

-Տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյան, ներկայացրեք Ձեր մեկնաբանությունը:

Հենրիկ Նավասարդյան

-Արհեստական խոչընդոտները տեղադրվում են ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ: Արհեստական անհարթությունների կառուցումը նախատեսված են այն դեպքում, երբ հիմնական վերանորոգման է ենթարկվում ճանապարհը կամ նոր ճանապարհի կառուցման ժամանակ անհրաժեշտ այն վայրերում, որտեղ պահանջարկ կա: Սովորաբար, նշվում է, եթե այդ վայրերում անցնում են հասարակական տրանսպորտային միջոցներ, ապա նման վայրերում չի թույլատրվում կառուցել արհեստական անհարթություններ:

Պարոն քաղաքապետ, եթե այս տեմպերով շարունակենք, ապա քաղաքն ամբողջությամբ կվերածենք արհեստական անհարթությունների: Նշեմ, որ նախընտրում ենք

այլ մոտեցումներ, որը Ձեր կողմից հավանության է արժանացել՝ անհրաժեշտության դեպքում արհեստական անհարթության փոխարեն կահավորել հետիոտնային կանչի կանաչ լուսացույցով, որը կարծում եմ ավելի արդյունավետ է:

Հայկ Մարության

-Տիկին Մկրտչյան, կցանկանայի պատմել փոքր դրվագ, որ Դուք պատկերացնեք ինչ պրոցեսներ են տեղի ունենում:

Մյասնիկյան պողոտայում, որտեղ հետագայում տեղադրվել է հետ կանչով լուսացույց, բնակիչները բողոքում էին, որ տեղադրվի արհեստական խոչընդոտ: Նշված հատվածում արհեստական խոչընդոտ կառուցելու համար քաղաքապետարանը դիմել էր ճանապարհային ոստիկանություն և ճանապարհային ոստիկանության կողմից տրվել էր համաձայնություն: Հաշվի առնելով, որ հարյուրավոր գործընթացներ են իրականացվում, ես բոլորի վերաբերյալ չեմ կարող անձամբ տեղեկացված լինել և այս ամենի մասին պատահական իմացել եմ սոցիալական ցանցերից:

Ես ինքս լինելով վարորդ՝ հասկանում եմ, որ Մյասնիկյան պողոտայում արհեստական խոչընդոտ կառուցելու առաջարկությունն անընդունելի եմ համարում: Վերոհիշյալի վերաբերյալ քննարկումներ ունեցա ճամապարհային ոստիկանության մասնագետի հետ, ում կողմից նշվեց, որ օրենքով նշված տարածքում չի թույլատրվում արհեստական անհարթություն կառուցել, բայց նախքան դա ճանապարհային ոստիկանության կողմից տրվել էր համաձայնություն: Հաշվի առնելով այդ դիրքորոշումը՝ քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Սարգսյանին, աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանին հանձնարարեցի այդ տարածքում կասեցնել արհեստական անհարթություն կառուցելու աշխատանքները:

Արհեստական անհարթություններ կառուցելու վերաբերյալ բնակիչների կողմից ներկայացված յուրաքանչյուր դիմում քաղաքապետարանը պարտավոր է ներկայացնել ճանապարհային ոստիկանություն, և, ցավոք սրտի, ճանապարհային ոստիկանության կողմից տրվում է համաձայնություն: Արդյունքում ամբողջ քաղաքում կառուցել արհեստական անհարթություններ նորմալ չէ: Այսպիսով՝ ուզում եմ նշել, որ այս ամենը միանձնյա չի որոշվում:

Կոնկրետ այդ դիմումի դեպքում միգուցե կարելի էր ավելի ծավալուն ներկայացնել պարզաբանումներ: Նշեմ, որ արհեստական անհարթություններ կառուցելը կապված է նաև ֆինանսական միջոցների հետ, քանի որ ծախսվում է բավականին մեծ քանակությամբ ասֆալտ:

Գրիգոր Հարությունյան

-Այո, պարոն քաղաքապետ, **300-500** քմ ասֆալտի ծավալ է պահանջվում յուրաքանչյուր խոչընդոտի կառուցման համար:

Հայկ Մարության

-Այսինքն՝ յուրաքանչյուր արհեստական խոչընդոտի կառուցումը նվազեցնում է մնացած ասֆալտապատման աշխատանքների ծավալը:

Գրիգոր Հարությունյան

-Պարոն քաղաքապետ՝ նշեմ, որ դրանք լինում են **12** սմ հաստությամբ և **7** մ լայնությամբ:

Հայկ Մարության

-Պարոն Հարությունյան, խնդրում եմ կոնկրետ այս հարցը ևս մեկ անգամ տիկին Մկրտչյանի հետ քննարկել:

Գրիգոր Հարությունյան

-Այսօրվա դրությամբ ամեն օր բնակիչների կողմից ստանում ենք արհեստական խոչընդոտ կառուցելու վերաբերյալ **5-6** դիմում: Ստանում ենք նաև դիմումներ, որոնցով բնակիչները խնդրում են արդեն իսկ կառուցված արհեստական խոչընդոտները քանդել, օրինակ՝ Գուրգեն Մահարու փողոցի դեպքը, բնակիչները ներկայացրել էին **98** քաղաքացու ստորագրությամբ դիմում և խնդրում էին քանդել արհեստական խոչընդոտը, որն այդքան աշխատանք կատարելուց հետո քանդվեց:

Սաթենիկ Մկրտչյան

-**2**-րդ հարցը վերաբերում է Ավան վարչական շրջանում գործող «Մանկապարտեզներ» ՀՈԱԿ-ին: Երևանում յուրաքանչյուր մանկապարտեզ հանդիսանում է առանձին ՀՈԱԿ, իսկ Ավան վարչական շրջանում **7** մանկապարտեզ միավորված է մեկ ՀՈԱԿ-ում: Որոշումը ընդունվել է դեռևս **2005** թվականին Ավան համայնքի ավագանու կողմից:

Արդյոք կա՞ վերլուծություն կամ եզրակացություն այս ՀՈԱԿ-ի գործունեության արդյունավետության մասին, և ինչու՞ է կոնկրետ Ավան վարչական շրջանում այս կառուցվածքային ձևը գործում և կա արդյոք վերլուծություն, որ դա հանդիսանում է լավ մոդել, հակառակ դեպքում կարծում եմ, որ սա անհամաչափ մոտեցում է և պետք է այս հարցին լուծում տրվի:

Նշեմ նաև, որ նախապես ուսումնասիրել եմ հաստիքացուցակը և բյուջետային հատկացումները ու, կարծես թե, ֆինանսական տեսանկյունից այդքան մեծ չէ տարբերությունը: Հաստիքացուցակում կան լուրջ անհամապատասխանություններ,

հաստիքակազմն ի տարբերություն մյուս վարչական շրջանների, անհամեմատ մեծ է, հույս ունեմ, որ առաջիկայում կճշտվեն:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Ավան վարչական շրջանում գործող տվյալ ՀՈԱԿ-ի ղեկավարն ընտրվել է վերջերս, մոտ 2-3 ամիս առաջ և այդ մոդելը մեզ համար ընդունելի է: ՀՈԱԿ-ի գործունեությունը և ընդհանուր վարկանիշը բացասական չէ, այստեղ առկա է որոշակի առումով հաստիքների խնայողություն, կառավարման մեկ կետից ուղղորդում: Նոր տնօրենի կողմից առաջարկված նոր աշխատանքային ծրագիրը եթե մինչև տարեվերջ արդարացվի, ապա այս մոդելը կկիրառվի նաև մյուս վարչական շրջաններում: Հակառակ դեպքում, կվերականգնվի այն ձևը, որը գործում է մյուս վարչական շրջաններում: Փաստում եմ նաև, որ տվյալ ՀՈԱԿ-ից բողոքներ չկան:

Սաթենիկ Մկրտչյան

- Մինչև տարեվերջ փորձենք ունենալ այդ վերլուծական տվյալները, որպեսզի հասկանանք կառավարումն ինչու է այդքան անհամաչափ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հացերն սպառվեցին:

Ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ